

ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՔՐԻՍԹՈՖՐ ՌԻՈՔՐ
(1942--2017)

Քրիսթոֆը Ուոքըր ծնած էր 1942ին, Անգլիա: Բարձրագոյն ուսումը ստացած էր Լանսինկ Քոլէճի եւ Օքսֆորտի Պրասնոգ Քոլէճին մէջ: Շրջան մը աշխատած էր Սոթաիզ աճուրդի տան մէջ, ապա՝ Փենկուէն Հրատարակչատան խմբագրական բաժինը: Աշխատակցած էր միջինարեւելեան հարցերով զբաղող պարբերաթերթերու: Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանի իր հետաքրքրութիւնը զինք առաջնորդած էր հայերուն: Ուինսթըն Չըրչիլ ուսումնական–ուղեւորական մրցանակը շահած էր եւ այդ միջոցով այցելած Վան, Կարս, Անի, Երեւան եւ Էջմիածին: Նոյն միջոցով 1971ին եկած էր Լիբանան եւ մեկնած Մ. Նահանգներ: Լիբանան իր այցելութեան՝ *Զարթօնքի* խմբագիր Գերսամ Ահարոնեանի միջոցով ծանօթացած եւ բարեկամացած էի հետը, օժանդակած իրեն եւ պատասխանած իր բազմաթիւ հարցումներուն: Տասնամեակ մը աշխատելէ ետք, 1980ին Անգլիոյ Քրում Հելմ եւ Մ. Նահանգներու Սենթ Մարթինզ Փրէս հրատարակչատունները լոյս ընծայեցին իր գիրքը՝ *Armenia, the Survival of a Nation*: Այդ գիրքին մէջ նշուած է որ կենսագրական բաժինը (էջ 379-428) ստորագրեալս տրամադրած է:

Իր կեանքի տեսողութեան, զանազան առիթներով հայանպաստ յօդուածներով հանդէս եկած է Լոնտոնի կարեւոր թերթերէն *Թայմզ* մէջ եւ այլուր: Հայկական գաղութներ, յատկապէս Մ. Նահանգներ, գիտաժողովներու եւ կամ դասախօսութեանց հրաւիրուած է: Ռիչըրտ Յովհաննէսեանի *The Armenian People from Ancient to Modern Times* գիրքին Բ. հատորին մէջ գրած է “World War I and the Armenian Genocide” ուսումնասիրութիւնը:

Հեղինակած է *Armenia and Karabagh* (1991), *Visions of Ararat (writings on Armenia)* (1997, 2005), *At History's Crossroad: The Making of the Armenian Nation (The Armenians: From Kings and Priests to Merchants and Commissars)* (2006): 1976ին, Տէյվիտ Լենկին հետ գրած է *The Armenians* 24 էջնոց գրքոյկը փոքրամասնութեանց իրաւունքներու խումբին համար¹: Ռուբէն Գալիշեան Երեւանի մէջ հրատարակած է իր 28 էջնոց *Armenia a Very Brief History* գիրքը²:

Ուոքըր հայկական նիւթերէ զատ այլ նիւթերով ալ հետաքրքրուած էր: Ան լոյս ընծայած էր *Oliver Baldwin: A Life of Dissent* (2003), *Islam and the West* (2005), *Reason and Religion in Late-seventeenth Century England – the Politics and Theology of Radical Dissent* (2013) գիրքերը: Ուոքըր աշխատակցած է *Հայկազեան հայագիտական հանդէսի* ԺԵ. եւ ԺԷ. հատորներուն՝ “Writing about the Armenian Genocide” եւ “Britain and the Armenian Genocide, Reflections in 1995” յօդուածներով:

ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

¹ Ասոր բարեփոխուած տարբերակը լոյս տեսաւ 1977ին: Գրքոյկը ունեցած է հինգ վերատպութիւն:

² Գիրքը յետագային 52 էջի վերածուած է եւ իր անունով լոյս տեսած է: Գիրքին 36-41 էջերը գրուած են ուրիշի մը կողմէ առանց իր գիտակցութեան:



ՌՈՊԸՐԹ ԹՈՄՍԸՆ
(1934–2018)

Մ. Նահանգներու ոչ-հայ հայագետներու մեծագոյն ներկայացուցիչներէն փրոֆեսոր Րոպըթ Ուիլիըմ Թոմսըն ծնած է 24 Մարտ 1934ին, Անգլիա: Համալսարանական կրթութիւնը ստացած է Անգլիոյ Քեմպրիճ Համալսարանին մէջ (մագիստրական՝ 1958, դոկտորական՝ 1962): Հետեւելով փրոֆեսոր Կարիթի դասընթացքներուն եւ խորանալով հայերէնի, արաբերէնի եւ վրացերէնի մէջ Պելճիքայի Լուվէն Համալսարանէն ստացած է նաեւ միջինարեւելեան լեզուներ դասաւանդելու վկայագիր (1962): Արդէն 1958ին կը սկսի հայերէն սորվիլ, առաջին դասերը առնելով Վիեննայի մէջ: Թոմսըն առիթ կ'ունենայ տարի մը հետեւելու Իսթանպուլի Halki Theological Collegeի դասընթացքներուն, այնուհետեւ միքանի ամառ վերադառնալու հոն եւ գիտահետազոտական որոնումներ կատարելու Իսթանպուլէն մինչեւ Տրապիզոն երկարող բիզանդական, յունական եւ հայկական հնավայրերու մէջ: Պոլսոյ մէջ ան կապեր կը հաստատէ հայոց պատրիարքին եւ հայ համայնքին հետ:

1960-61՝ Տամպլթըն Օքսի կրտսեր գիտաշխատող ըլլալով Թոմսըն կը ծանօթանայ մեծանուն արուեստաբան, բիզանդագէտ-մանրանկարչագէտ Սիրարփի Տէրներսէսեանին, որ տեսնելով Թոմսընի հետազոտութիւնը Ս. Աթանասիոս Աղեքսանդրացիի ասորերէն եւ հայերէն բնագրերուն մասին, կ'օգնէ անոր եւ զայն կը մղէ հայկական առնչութեամբ այլ պրպտումներու: Տէրներսէսեան Թոմսընը կը մղէ նաեւ երթալու Հարվըրտ, ուր Պոստոնի եւ շրջակայից հայերը կը ջանային հայկական ամբիոն մը հաստատել, ուր Աւետիս Սանճեան արդէն պաշտօնակոչուած էր իբրեւ կրտսեր գիտաշխատող: 1961-63 ան կը պաշտօնակոչուի Հարվըրտ Համալսարան, որուն հայագիտական ամբիոնին (ետքը վերանուանուած Մեսրոպ Մաշտոցի անունով) վարիչը կ'ըլլայ 1969էն 1992: Իր ջանքերով հայագիտութիւնը կը տեղադրուի Հարվըրտի դասանիւթերու քարտէսին վրայ եւ կը հրամցուի այն հազուագիտ ուսանողներուն, որոնք կրնային հետաքրքրուած ըլլալ հայագիտական նիւթերով: Այս շրջանին Մ. Նահանգներու արեւելեան նահանգներուն մէջ հայագիտութիւնը ուրոյն տեղ կը սկսի գրաւել բիզանդագիտութեան մեծ քարտէսին մէջ, հակառակ որ Թոմսընի հետաքրքրութիւնները յատկապէս հայ մատենագրութեան եւ հայ դասական ու միջնադարեան պատմութեան շրջաններուն կ'առնչուէին: Թոմսըն կը հաւաստէ թէ կը սիրէր դասաւանդել, եւ թէ՛ «գիտէի, շուրջս ուրիշ ոչ ոք հայերէն պիտի դասաւանդէր...»: Այնուհետեւ՝ 1993-2001, ան կը պաշտօնակոչուի Օքսֆորտի Համալսարանի Գալուստ Կիլպենկեանի անուան հայագիտական ուսմանց ամբիոնի վարիչի պաշտօնին:

1979-89՝ եղած է երէց գիտաշխատող Տամպլթըն Օքսի մէջ, միաժամանակ, 1984-89, վարած անոր հետազոտական գրադարանին եւ հաւաքածոյին տնօրէնութիւնը, հուսկ եղած է պատուակալ անդամը նոյն հաստատութեան: Թոմսըն հիմնադիր-անդամ էր the Society for Armenian Studiesի, ապա անոր ակադեմական խորհրդատուութեան մարմինին ատենապետը եղած էր երկար տարիներ: Թոմսընի նպաստը բացառիկ մեծ է հայկական, ասորական, վրացական եւ բիզանդական պատմագիտութեան եւ բանասիրութեան:

1979-89՝ եղած է երէց գիտաշխատող Տամպլթըն Օքսի մէջ, միաժամանակ, 1984-89, վարած անոր հետազոտական գրադարանին եւ հաւաքածոյին տնօրէնութիւնը, հուսկ եղած է պատուակալ անդամը նոյն հաստատութեան: Թոմսըն հիմնադիր-անդամ էր the Society for Armenian Studiesի, ապա անոր ակադեմական խորհրդատուութեան մարմինին ատենապետը եղած էր երկար տարիներ:

Թոմսընի նպաստը բացառիկ մեծ է հայկական, ասորական, վրացական եւ բիզանդական պատմագիտութեան եւ բանասիրութեան:

Անոր հայագիտական բերքին ոչ-ամբողջական ցանկը կ'ընդգրկէ հետեւեալները.- *The Teaching of Saint Gregory: An Early Armenian Catechism* (1970), *An Introduction to Classical Armenian* (1975), *A Textbook of Modern Western Armenian* (Գէորգ Պարտաքնեանի հետ, 1977), *Studies in Armenian Literature and Christianity* (1994), *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD* (1995), *Rewriting Caucasian History: The Medieval Armenian Adaptation of the Georgian Chronicles. The Original Georgian Texts and The Armenian Adaptation* (1996), *Saint Basil of Caesarea and Armenian Cosmology* (2012):

Ան մեծ նպաստ ունի վրացի, ասորի բայց մանաւանդ հայ մատենագիրներու երկերուն անգլերէն թարգմանութեան, հարուստ ծանօթագրութեան ու հրատարակութեան գործին: Իր թարգմանութեամբ լոյս տեսած են.- *Agatangeghos: History of the Armenians* (1976, 2001), *Moses Khorenatsi: History of the Armenians* (1978, 2006), *History of Vardan and the Armenian War* (1982), *Definitions and Divisions of Philosophy by David the Invincible Philosopher* (1983), *History of the House of Artsrunik'* (1985), *The Historical Compilation of Vardan Arewelc'i* (1989), *The History of Lazar Parpeci* (1991), *The Armenian History Attributed to Sebeos* (Ճէյմս Հաուլըրտ-Ճոնսընի եւ Թիմ Կրինոուտի հետ, 1999), *The Lawcode (Datastanagirk) of Mxitar Gos* (2000), *The Armenian Adaptation of the Ecclesiastical History of Socrates Scholasticus* (2001), *Hamam, Commentary on the Book of Proverbs* (2005), *Nersēs of Lambron: Commentary on the Dormition of Saint John* (2007, 2017):

Իր երկերէն ոմանց երկրորդ հրատարակութիւնը ենթարկուած է լրամշակման: Նոյնն է պարագան իր բազմաթիւ յօդուած ուսումնասիրութիւններուն, որոնք ունեցած են մասնակի կամ ծաւալուն վերամշակումներ՝ իրենց երկրորդ հրատարակութիւններուն ատեն:

Թոմսընի հայագիտական նպաստին մէկ իւրայատկութիւնը այն է, որ ան հայ միջնադարեան մատենագրութիւնը, Հայաստանի քրիստոնէացումը, վաղ միջնադարու Հայաստանի պատմութիւնը դիտած է Կովկաս-Բիզանդիոն-Իրան եւ շրջանի ժողովուրդներու մշակութաբանական փոխառնչութիւններու համապատկերին մէջ: Անոր հետազոտութիւններուն կարգ մը խնդրայարոյց եզրայանգումներն ու մեկնաբանութիւնները դուռ բացին սուր հակադրութիւններու, որոնք երբեմն դուրս եկան իրենց գիտական ծիրէն:

Ակադեմական իր ուսումնասիրութիւններուն կողքին, Թոմսըն մասնակցած է դասախօսութիւններու, գիտաժողովներու՝ հայոց լեզուի, հայ բնագրագիտութեան, ինքնութեան եւ ծովման, հայագիտութեան հորիզոնին, հայ իրականութեան ժողովրդավարութեան եւ հեղինակութեան մասին:

Ոչ-հայ հայագէտներու ընտրանիին ամենաբեղուն առաջին հնգեակին մաս կազմող փրոֆեսոր Ռոպըրթ Թոմսըն մահացաւ 20 Նոյեմբեր 2018ին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ (adakessian@haigazian.edu.lb)

ԱՐԱ ԿԻԻԼԷՐ
(1928--2018)

«Պոլսոյ աչք» անունով յայտնի լուսանկարիչ Արա Կիլեր ծնած է Իսթանպուլ, 16 Օգոստոս 1928ին: Մինչեւ միջնակարգ եղած է Բանկալթիի Մխիթարեան Վարժարանի աշակերտ, ապա շրջանաւարտած է Պոլսոյ Կեդրոնականը՝ 1951ին: Հայրը դեղագործ ըլլալով հանդերձ բազմաթիւ արուեստագէտ բարեկամներ ունէր, որոնց

հետ շփուելով՝ ան սկիզբը որդեգրեց ֆիլմ-սինեմայի ասպարեզը, հետեւեցաւ Մուսին Էրթուրլուի թատերական դասընթացներուն, ապա թեքեցաւ մամուլին, իբրեւ ֆոթոթղթակից աշխատակցեցաւ *Ենի Իսթանպուլին*, *Հարրիէթին*, միաժամանակ Իսթանպուլի Համալսարանին մէջ հետեւեցաւ տնտեսագիտութեան:

1958ին երբ *Time-Life* Թուրքիոյ իր մասնաճիւղը բացաւ՝ Կիւլէր դարձաւ անոր սկզբնական թղթակիցը եւ հոշակուելով աշխակացեցաւ *Stern*ին, *Paris Match*ին եւ *Sunday Times*ին, միաժամանակ միացաւ Magnum Photosին ու տեղ գրաւեց *British Photography*ի 1961ի տարեգիրքին մէջ, նոյն տարին American Society of Magazine Photographersը զինք անդամագրեց իբրեւ առաջին թրքական լուսանկարիչը:

1960ականներէն Կիւլէրի արուեստի եւ պատմութեան նուիրումը լուսանկարները օգտագործուեցան հեղինակներու եւ *Horizon*, *Life*, *Time* եւ *Newsweek*ի կողմէ, ցուցադրուեցան՝ ցուցահանդէսներու մէջ: 1968ին իր գործերը ցուցադրուեցան Նիւ Եորքի Museum of Modern Artի՝ Ten Masters of Color Photography ցուցադրութեամբ, այնուհետեւ նաեւ լուսանկարչութեան միջազգային ցուցահանդէսներու մէջ:



1970ականներուն լուսանկարչական հարցազրոյցներ ունեցաւ Սալվատոր Տալիի, Մարք Շակալի, Էնսլը Էտրմզի, Ալֆրէտ Հիքքըի, Վիլի Պրանտի, Մարիա Քալասի, Պերթըրնտ Ռասըլի, Փապլօ Փիքասոյի, Ինտիրա Կանտիի, Ուինսթըն Չըրչիի եւ այլոց հետ: Բեմադրեց նաեւ *The End of the Hero* վաւերագրական ֆիլմը 1975ին՝ Ա. աշխարհամարտին մասին: Իր լուսանկարները կը պահպանուին աշխարհի տարբեր հաւաքածոներու մէջ: Իր ասպարէզին բերմամբ ճամփորդեց Քենիա, Պորնէօ, Նիւ Կինի, Հնդկաստան, Փաքիստան, Աֆղանիստան, Ղազախստան, Իրան եւ Թուրքիոյ նեիսերը:

Կիւլէրի կենսագործունէութեան մասին դրուատիքով կը խօսի Նեզհի Թաւլաս իր հրատարակած *Foto Muhabiri* գիրքին մէջ:

Կիւլէր մեծ կարեւորութիւն կու տար իր լուսանկարներուն մէջ երեւոյց մարդոց. ինքզինք կը նկատէր ակնդիր պատմաբան: Ըստ իրեն լուսանկարը պարտի ցոյց տալ մարդիկը իրենց կեանքի եւ տառապանքի յիշողութեամբ:

«Թուրքիոյ քսաներորդ դարու լուսանկարիչը»ի մրցանակակիր (1999), «Թուրքիոյ մշակոյթի եւ արուեստի մեծ մրցանակ»ակիր (2005) Արա Կիւլէր արժանացած է մեծամեծ պատիւներու՝ Թուրքիոյ եւ աշխարհի տարբեր մայրաքաղաքներու մէջ:


Արա Կիւլէրի հայագիտութեան նպաստը կը կայանայ մանաւանդ իր նկարագիրներուն մէջ.- *Living in Turkey* (1992, 1993), *Sinan: Architect of Süleyman the Magnificent* (1992), *Ara Güler's Creative Americans*, *Ara Güler's Movie Directors* (1989) եւ *Ara Güler: Photographs* (1980), ուր կը տեսնենք իմիջիայլոց Հայկական Վիլայէթներու, գաւառի եւ հայաբնակ վայրերու հայկական մշակոյթի եւ կենցաղի կոթողներու փաստավաւերագրական լուսանկարներ, որոնք յետեղեռնեան ժամանակի ամենէն ամբողջական հաւաքածոն կը կազմեն: Իր կը հաշուէ շուրջ 800,000 լուսասահիկներ:

Արա Կիւլէր նաեւ գրող է. իր առաջին գրութիւնը լոյս տեսած է *Հապէր* թերթին մէջ: 1950ին, իր «Կաղանդի տարօրինակ գիշեր մը» պատմուածքով դասուած է թուրք լաւագոյն նորավիպագիրներու կարգին: Սակայն հետզհետէ կը դառնայ հայ գրական կալուած, *Ժամանակ* թերթին մէջ վարելով գեղարուեստական բաժնի

խմբագրությունը եւ Մխիթարեան Սանուց Միության Սան, Կեդրոնական Սանուց Միության Հանդէս Մշակոյթի եւ Զառագայթ գրական հանդէսներուն եւ շաբաթաթերթին մէջ հրատարակելով իր պատմութեան, որոնք արուեստի նորագոյն դպրոցներու ազդեցութիւնը կը կրեն:

Արա Կիւլէր մահացաւ 17 Հոկտեմբեր 2018ին եւ թաղուեցաւ Պոլսոյ հայաշատ Շիշլի շրջանի հայկական գերեզմանատան մէջ: Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ իր յուղարկաւորութեան ատեն հրապարակուեցաւ Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ Էրտողանի ցաւակցական պատգամը:

ՀՀՀ



ՍԱՐԳԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(1928–2019)

Ականաւոր բանագէտ, հայագէտ-արեւելագէտ Սարգիս Բարթոլոմէոսի Յարութիւնեանը ծնուել է ալաշկերտցի եւ մշեցի ծնողների ընտանիքում, 22 Սեպտեմբերի 1928ին, Ղազանչի գիւղ, Շիրակի մարզ: Նա փոքրուց հաղորդակից է եղել ժողովրդական բառ ու բանին, հաւատալիքներին եւ վիպաշխարհին:

Ի. դարի կէսերից Յարութիւնեանը դարձել էր հայագիտութեան եւ մասնատրապէս՝ հայ բանագիտութեան նուիրում ժրջան մշակը: Այս ոլորտում նա ճանաչուած հեղինակութիւն էր եւ է՝ թէ՛

Հայաստանում, թէ՛ արտերկրում: Իրաւամբ վաստակելով «հայ բանագիտութեան նահապետ»ի անպաշտօն տիտղոսը՝ Յարութիւնեանը հայ բանահիւստութեան շնորհալի կրողն ու վերապատմողն էր նաեւ:

1940ին Յարութիւնեանների ընտանիքը տեղափոխուել է Թբիլիսի: 1947ին ընդունուել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտի արեւելեան բաժինը, որտեղ ուսումնասիրում է պարսից լեզու եւ գրականութիւն: Եղել է Ստեփան Մալխասեանցի եւ Աւետիք Իսահակեանի անուանական թոշակառու: Ուսանողական տարիներից առնչուելով իրանական մշակոյթին՝ նա թրծում է որպէս լայնածիր ընդգրկման հայագէտ, որը քաջատեղեակ էր նաեւ հարեան ժողովուրդների փոխառնչութիւններին ու պատմամշակութային կապերին³: Համալսարանում Յարութիւնեանին բախտ է վիճակում ունկնդրելու Հրաչեայ Աճառեանի, Գրիգոր Ղափանցեանի, Էդուարդ Աղայեանի, Վարդան Մելիքեանի դասախօսութիւնները: 1952ին Յարութիւնեանն աւարտաճառ է գրում «Պարսկերէնի տարրերը Սայեաթ-Նովայի հայերէն խաղերում» թեմայով:

1952-56՝ աշխատել է Հայպոլիգրաֆիատ եւ գրքի առետրի վարչութիւններում: 1959ին պաշտպանել է թեկնածուական՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» նիւթով, 1971ին՝ դոկտորական՝ «Մանուկ Աբեղեան. կեանքն ու գործը» նիւթով: 1956ից, Յարութիւնեանի գիտական գործունէութիւնն ընթացել է ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտում: 1960ին նա տեղափոխուել է Ակադեմիայի

³ Նա իր գիտական պրպտումների ընթացքում բազմիցս անդրադառնում է հայերի հետ հնուց շփումներ ունեցած ազգակից ժողովուրդների մշակոյթներին:

նորակազմ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ (ՀԱԻ), ուր աշխատել է սկզբում՝ իբրեւ կրտսեր, այնուհետեւ՝ աւագ գիտաշխատող, եւ իր հարուստ գիտելիքները երիտասարդներին է փոխանցել մինչեւ իր մահը՝ հայ ժողովրդական բանահիւսության բաժնում: 1995-2018՝ եղել է հայ բանահիւսության գծով զվխատոր գիտաշխատող եւ ղեկավարել ՀԱԻ բանահիւսության տեսության եւ պատմության բաժինը: 1971-73՝ եղել է «Սասնայ ծռեր»-ի նոր պատումների գրառման նպատակային գիտարշաւախմբի ղեկավար, 1972-2003՝ բանահիւսական սկզբնաղբիւրների վաւերագրման բաժնի վարիչ: 1992-2007՝ եղել է ՀԱԻ գիտական գծով փոխտնօրէնը: 2000ին ընտրուել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ:

Յարութիւնեանը դեռ երիտասարդ տարիքից է իրեն դրսեւորել որպէս գիտութեան բանիմաց կազմակերպիչ: 1971ին նորագոյն մեթոդներով բանահիւսական արխիւային նիւթերի գիտական դասաւորման, մշակման եւ վաւերագրման նպատակով, նրա ղեկավարութեամբ կազմաւորուեց աշխատանքային խումբ, որի հիման վրայ ստեղծուեց բանահիւսական սկիզբնաղբիւրների վաւերագրման բաժինը: Այդ աշխատանքներին զուգահեռ՝ ընթացել է հայ ժողովրդական 16,000 երգ-խաղիկների մոտիւային համաբարբառի քարտարանի կազմման աշխատանքը:

Յարութիւնեանն իր բանագիտական գործունէութիւնը սկսել է նշանաւոր բանագէտ, ակադեմիկոս Արամ Ղանալանեանի ղեկավարութեամբ, սակայն նրա համար գիտական անառարկելի հեղինակութեան եւ «հեռակայ գիտական ուսուցչի» դեր է խաղացել հայ մեծանուն բանասէր Արեղեանը: Ինք է կազմել, ծանօթագրել եւ խմբագրել Արեղեանի երկերի ութհատորեակի Է. եւ Ը. հատորները (1975, 1985):

Ժառանգելով եւ ամբողջ էութեամբ իւրացնելով Արեղեանի լաւագոյն աւանդները՝ Յարութիւնեանը յաջողութեամբ խորամուխ եղաւ վիպական բանահիւսութեան՝ յատկապէս հայոց ազգային հերոսավէպի, հմայական բանահիւսութեան տարբեր սեռերի՝ առասպելաբանութեան, հայ հին գրականութեան, բանագիտութեան պատմութեան, արեւելագիտութեան բնագաւառներին: Իր բազմամեայ հետազոտական աշխատանքը նշանաւորուեց մի շարք կոթողային մենագրութիւններով, ինչպէս.- *Հայ ժողովրդական հանելուկներ* (1960, իսկ 1965ին՝ բնագրերի համահաւաք գիտաքննական ներկայացմամբ), *Անէծքի եւ օրինանքի ժանրը հայ բնահիւսութեան մէջ* (1975), *Հայ հմայական եւ ժողովրդական աղօթքներ* (2006), դպրոցական տարիքի երեխաների համար նախատեսուած *Հայ հին վիպաշխարհը* (1987), *Հայ առասպելաբանութիւն* (2000), *Հին հայոց հաւատալիքները, պաշտամունքը, կրօնն ու դիցարանը* (2001):

Հայոց հեթանոսական առասպելների եւ ժողովրդական հաւատալիքների վերաբերեալ Յարութիւնեանի ուսումնասիրութիւնները՝ թէեւ ամփոփ, բայց խիստ տարողունակ եւ հարուստ շարադրանքով, տեղ գտան Մոսկուայում լոյս տեսած *Мифы народов мұра* (Աշխարհի ժողովուրդների առասպելները) երկհատոր հանրագիտարանում (1981, 1982, վերհրտ. 1990):

Յարութիւնեանի բանագիտական գործունէութեան միւս կարեւոր բնագաւառն ընդգրկում է հմայական բանահիւսութեան գրեթէ բոլոր կարեւոր ժանրերը՝ անէծքները, օրինանքները, աղօթքները: Բանաձեւային բանարուեստի այս փոքրածաւալ տեսակները, հենց Յարութիւնեանի հետեւողական ջանքերի շնորհիւ, մեզանում դրուեցին գիտական ամուր հիմքերի վրայ: Իր աշխատութիւններով Յարութիւնեանը սկզբնաւորեց հայ ժողովրդական հանելուկների եւ հայ հմայական բանահիւսութեան գիտական ուսումնասիրութիւնը:

Յարութիւնեանի բանագիտական գործունէութեան ամենածաւալուն եւ ծանրակշիռ ոլորտը, սակայն, հայ բանահիւսութեան վիպական ժանրերն են՝ յատկապէս ազգային հերոսավէպը: Ըստ էութեան, նա զարգացրեց եւ նոր մակարդակի բարձրացրեց Գարեգին Սրուանձտեանցի, Աբեղեանի, Կարապետ Մելիք-Օհանջանեանի վիպագիտական տեսութիւններն ու մտքերը: Անուրանալի է Յարութիւնեանի ներդրումը նաեւ «Սասնայ ծռեր» հերոսավէպի նոր պատումների յայտնաբերման, գրառման, հրատարակման ու հանրայնացման գործում: 1971-73՝ իր գլխաւորած գիտական արշաւախումբը ՀԽՍՀ 205 բնակավայրերից գրառել է մեր օրերը հասած դիւցազնավէպի 81 նոր պատում, որոնց մի մասը հրատարակուեց *Սասնայ ծռեր*, Գ. եւ Դ. (1979, 1999) հատորներով՝ իր եւ Արուսեակ (Վենետա) Սահակեանի համատեղ աշխատակցութեամբ: Յարութիւնեանի գործուն մասնակցութեամբ են կեանքի կոչուել «Հայկական էպոսը եւ համաշխարհային էպիկական ժառանգութիւնը» վերտառութեամբ միջազգային շարունակական գիտաժողովները (2003-17), որոնց հիմնական կազմակերպիչը իր գործընկեր Ազատ Եղիազարեանն էր:

Յարութիւնեանը հայ վիպական բանահիւսութիւնը դիտարկել ու լուսաբանել է հարեւան ժողովուրդների (պարթեւների, պարսիկների, քրդերի) հետ փոխառնչութիւնների համապատկերում: Այս առումով յատկապէս յիշատակութեան են արժանի «Սասնայ ծռերի՝ արձագանգները Շարաֆ Նամէում» (1975, Հրաչ Բարթիկեանի հեղինակակցութեամբ), «Իրանական հոգեւոր մշակոյթի արտացոլումները հայ հին ասանդութեան մէջ» (1994) յօդուած-ուսումնասիրութիւնները: Յարութիւնեանը նաեւ հայ բանագիտութեան պատմութեանն առհասարակ եւ զատ-զատ նրա երախտատրներին նուիրուած բազմաթիւ աշխատութիւնների հեղինակ է:

Գիտական եւ գիտա-կազմակերպական աշխատանքին զուգահեռ՝ Յարութիւնեանը նաեւ բազմափորձ ու խորագէտ խմբագիր էր: 2006-18՝ նա գլխաւորել է *Պատմաբանասիրական հանդէսի* խմբագրական խորհուրդը: Յարութիւնեանի խմբագրած՝ հրապարակի վրայ գտնուող մենագրութիւնների թիւն անցնում է քսանից: Նա երկար տարիներ դասաւանդել է ԵՊՀ եւ Հայաստանի այլ ԲՈՒՀ-երում, բազմիցս եղել պետական քննական յանձնաժողովի նախագահ ԵՊՀ արեւելագիտութեան ֆակուլտէտում: Դասախօսական աշխատանքը թողնելուց յետոյ Յարութիւնեանը նախանձախնդիր էր նորամուտ երիտասարդ մասնագէտների պատրաստման գործում: Նրա ղեկավարութեամբ են պաշտպանել իրենց թէզերը մօտ 20 գիտութեան թեկնածուներ եւ դոկտորներ:

Սարգիս Յարութիւնեանը, իր համեստ եւ առինքնող բնատրութեան ճգողականութեան շնորհիւ, վայելում էր թէ՛ տարեկիցների, թէ՛ միջին ու երիտասարդ սերնդի սէրն ու յարգանքը: Նա անչափ սիրում էր մարդկային ջերմ ու անպաշտօն շփումները, օժտուած էր սեղանապետի եւ կենացասացի բացառիկ տաղանդով: Իմաստուն խորհրդատու էր, սրտացաւ ունկնդիր, յուսալի աւագ ընկեր: Նրա հումորն ունէր բանահիւսական համ ու հոտ, միեւնոյն ժամանակ իր երգիծական խօսքը երբեք խայթող չէր, քանի որ այդ խօսքից մշտապէս յորդում էր բարութիւն ու սէր: Նոյնիսկ տարիքի բերումով առաջացած առողջական խնդիրների ժամանակ՝ Յարութիւնեանը շարունակում էր համընթաց շարժուել իր ժամանակին, հետաքրքրում քաղաքական ու հասարակական անցուդարձով, ուրախանում Հայաստանի դրական փոփոխութիւններով:

Սարգիս Յարութիւնեանը մահացաւ 28 Յունուար 2019ին:

ՏՈՐՔ ԴԱԼԱԼԵԱՆ (torqdal@yahoo.com)



ՍԱՄՍՈՆ ՔԱՌԵԱՆ
(1938--2019)

Պատմական գիտությունների դոկտոր (2003), պրոֆեսոր (2010) Սամսոն Մանթաշի Քառեանը ծնունդ է 1938 Ապրիլի 15ին, Աինիժոր գիղում (Ալավերդու շրջան): 1959ին աւարտել է Ստեփանաւանի անասնաբուծական տեխնիկումը: 1959ին որպէս անասնաբոյժ աշխատել է Ծաղկաշատի կոլտնտեսութիւնում: 1959-62՝ ծառայել է խորհրդային բանակում: 1967ին աւարտել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտը: 1993-2010՝ եղել է Վանաձորի Պետական Համալսարանի պատմութեան ամբիոնի վարիչ: Աշխատութիւնները վերաբերում են ՀՀ 1918-20 միջազգային դրութեան ու արտաքին քաղաքականութեան հարցերին:

Առանձին հատորներով լոյս են տեսել Քառեանի *Պայմագիտական հետազոտութիւններ (գիտական յօդուածների ժողովածու)* (2001), *Իմ Սարոյեանը. յուշեր Սարոյեան. մատուցներով* (2002), *Հայաստանի Առաջին Հանրապետութեան պատմութեան պայմագրութիւն* (համահեղինակ, 2003), *Հայաստանի միջազգային դրութիւնը եւ արտաքին քաղաքականութիւնը 1918-1923 թուականներին. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար* (համահեղինակ, 2005), *Լօռեցիները հայրենական մեծ պատերազմում (1941-1945)* (համահեղինակ, 2006), *Հրանտ Մաթետոսեանի «Աինիժոր» ակնարկի քննարկումները եւ արձագանգները* (փաստաթղթեր եւ նիւթեր) (2007), *Յովհաննէս Թումանեանը եւ հայ ժողովրդի ողբերգութիւնը* (համահեղինակ, 2008), *Նախիջեւան (դարերի խորքից մինչեւ 1917 թուական)* (2010), *Նախիջեւան. դարերի խորքից մինչեւ մեր օրերը* (պայմանական ակնարկներ) (համահեղինակ, 2011), *Հեպք* (2014) գրքերը:

Սամսոն Քառեանը մահացաւ 24 Փետրուարի 2019ին, Վանաձորում:

ՀՀՀ

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ
(1927--2019)

Ստեփան Սմբատի Ստեփանեանը ծնունդ է 20 Նոյեմբեր 1927ին: 1950ին աւարտել է ԵՊՀ միջազգային յարաբերութիւնների ֆակուլտէտը: 1950-76՝ աշխատել է ՀԿԿ Կենտրոնական Կոմիտէում որպէս դասախօս, այնուհետեւ՝ դասախօսական խմբի ղեկավար: 1965ին Մոսկուայում պաշտպանել է թեկնածուական՝ նուիրում միջազգայնականութեան մարքսիստ-լենինեան 1956-65 սկզբունքներին. այն Երեւանում տպագրել է՝ *Интернационализм – основа национальной политики КПСС (Միջազգայնականութիւնը իբրեւ ՍՄԿԿի ազգային քաղաքականութեան հիմք)* խորագրով (1967):

1975ին Ստեփանեանը Մոսկուայում պաշտպանել է դոկտորականը՝ նուիրում Հայաստանի հանդէպ Գերմանիայի հակահայկական քաղաքականութեանը ԺԹ. դարի վերջ-Ի. դարի սկզբին: 1980ին նրան շնորհուել է պրոֆեսորի կոչում: Երկար տարիներ նա Երեւանի Պոլիտեխնիկական եւ Գիտատնտեսական Ինստիտուտներում ղեկավարել է քաղաքագիտութեան ամբիոնները, իսկ 1994ից աշխատանքի



անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում իբրեւ առաջատար գիտաշխատող, որտեղ 1999-2010՝ եղել է Հայկական Հարցի եւ Հայոց Յեղասպանության պատմության բաժնի վարիչ, միաժամանակ նաեւ՝ Երեւանի «Հրաչեայ Աճառեան» Համալսարանի միջազգային յարաբերութիւնների եւ քաղաքագիտութեան ամբիոնի վարիչ:

Ռուսերէն եւ հայերէն հեղինակել է բազմաթիւ գրքեր, գիտական ու հրապարակախօսական յօդուածներ: 1965-73՝ պարբերաբար աշխատել է ոչ միայն խորհրդային, այլեւ գերմանական արխիւներում, որտեղ յայտնաբերած հետաքրքիր փաստաթղթերի հիման վրայ գրել է Հայոց Յեղասպանութեան պատմութեանը նուիրուած գիտական

աշխատութիւններ: Երիտթուրքերի կողմից Հայոց Յեղասպանութեան իրականացման գործընթացում Գերմանիայի յանցագործ դերակատարութեանը նուիրուած նրա՝ *Армения в политике империалистической Германии (конец XIX - начало XX века)* (Հայաստանը կայսերապաշտական Գերմանիայի քաղաքականութեան մէջ (ԺԹ. դարի վերջ-Ի. դարի սկիզբ) (1975) մենագրութիւնը շարադրուած է հայկական, ռուսական եւ գերմանական տարատեսակ արխիւային փաստաթղթերի հիման վրայ: Գերմանական հակահայկական քաղաքականութիւնն այս ժամանակաշրջանում նա հիմնաւորել է Մերձաւոր Արեւելքում եւ Կովասում Գերմանիայի տնտեսական, քաղաքական եւ ռազմական հետաքրքրութիւններով: Միաժամանակ մանրամասնօրէն անդրադարձել նաեւ գերմանացի առաջադէմ գործիչների՝ Կարլ Լիբկնեխտի, Եոհաննէս Լեփսիուսի, Արմին Վեգնէրի եւ այլոց Գերմանիայում ծաւալած հայանպաստ գործունէութեանը: Թեմային Ստեփանեանը մանրամասնօրէն անդրադարձել է նաեւ *Германские Источники О Геноциде Армян* (Գերմանական սկզբնաղբիւրները Հայոց Յեղասպանութեան մասին, (հտր. 1, 1991, Նելլի Բաղդասարեանի հեղինակակցութեամբ) փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածուում: Այս արժէքաւոր ժողովածուում, որի ընդարձակ առաջաբանը պատկանում է նրա գրչին, ի մի են բերուած նրա կողմից գերմանական տարբեր - մասնատրապէս Պոցդամի, Դրեզդէնի եւ Բեռլինի - արխիւներից քաղուած փաստաթղթեր: Այստեղ զետեղուած են ոչ միայն գերմանական կառավարական շրջանակների պաշտօնական փաստաթղթերը, այլեւ Հայոց Յեղասպանութեան գերմանացի ականատեսների, գիտնականների, հրապարակախօսների, լրագրողների վկայութիւնները:

Ստեփանեանի խմբագրութեամբ Մոսկուայում 1992ին առաջին անգամ ռուսերէն թարգմանութեամբ հրատարակուել է 1921 Յունիսի 2-3ին Բեռլինում կայացած Սողոմոն Թեփիլեանի դատավարութեան սղագրական հաշուետոութիւնը՝ *Судебный Процесс Талаата Паша (Թալէթա փաշայի դատավարական գործընթացը)* խորագրով, որը Երեւանում լոյս է տեսել 2007ին:

2005ին Ստեփանեանը ռուսերէն թարգմանութեամբ եւ ընդարձակ առաջաբանով ու ծանօթագրութիւններով տպագրութեան է պատրաստել նաեւ գերմանացի պատմաբաններ Վոլֆգանգ եւ Զիգրիտ Գուստէրի՝ *Геноцид Армян. Официальные Документы Из Германских Архивов, Публикуемые Впервые* (Հայոց Յեղասպանութիւն. առաջին անգամ տպագրուող գերմանական արխիւների պաշտօնական փաս-

տալաթթեր (2005) ստուարաճալ եւ արժէքաւոր ժողովածուն, որտեղ զետեղուած փաստաթղթերն առնչում են գլխաւորապէս 1915-16ի կոտորածներին:

Ստեփանեանը հրատարակել է նաեւ Հայոց Յեղասպանութեանը եւ գերմանացի գործիչների այդ իրադարձութեան նկատմամբ դրսեւորած վերաբերմունքին նուիրուած գրքոյկներ՝ *Հայոց Յեղասպանութիւնը* (Ազատ Համբարեանի հեղինակակցութեամբ, 1995), *Արմին Վեզնէրը եւ Էրնստ Վերնէրը Հայոց Յեղասպանութեան մասին* (1996), *Եոհաննէս Լեփսիուսը եւ Հայաստանը* (1998):

Ռուսաստանի Դաշնութեան կողմից պետական մակարդակով Հայոց Յեղասպանութեան ընդունման հարցում Ստեփանեանը ներդրել է մեծ աւանդ, քանզի պատրաստել է փաստաթղթերի փաթեթ, որի հիման վրայ 14 Ապրիլ 1995ին Ռուսական դուման ճանաչել է Հայոց Յեղասպանութիւնը եւ ընդունել «Յայտարարութիւն 1915-1922 թուականներին հայ ժողովրդի Յեղասպանութեան դատապարտման մասին» փաստաթուղթը:

1995ից Ստեփանեանը միջազգային գիտաժողովներում հանդէս է եկել Հայոց Յեղասպանութեան եւ Հայկական Հարցի պատմութեանը նուիրուած զեկուցումներով, ինչպէս նաեւ հայկական հեռուստատեսութեամբ եւ ռադիոյով այդ թեմաներին նուիրուած բազմաթիւ ելոյթներով:

Ստեփանեանը պարգեատրուել է շքանշաններով, արժանացել է նաեւ Տեղեկատուութեան Միջազգային Ակադեմիայի ակադեմիկոսի կոչման (1998):

Ստեփան Ստեփանեանը մահացաւ 27 Յունիս 2019ին, Երեւանում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ (varuzhan.poghosyan@mail.ru)



ՌՈՒԲԷՆ ՏԵՐՏԵՐԵԱՆ
(1959–2020)


Երաժշտագէտ Ռուբէն Ալֆրէդի Տերտէրեանը ծնած է 3 Յուլիս 1959ին, Երեւան: Երաժշտաստեղծ Անետ Տերտէրեանի եւ Երաժշտագէտ Իրինա Տիգրանովայի որդին էր: 1977-82՝ սովորել է Երեւանի Կոմիտասի անուան Պետական Կոնսերվատորիայի (ԵՊԿ) երաժշտագիտութեան բաժնում, 1982-86՝ ԽՍՀՄ մշակոյթի նախարարութեան արուեստի գիտահետազոտական ինստիտուտում: 1982-94՝ դասաւանդել է ԵՊԿում, 1983-85՝ եղել է ՀԽՍՀ Կոմպոզիտորների Միութեան աագ խորհրդատու: 1985-88՝ վարել է Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի փոխտնօրէնի պաշտօնը, 1989-93՝ Հայհամերգին կից «Դերասան» համերգերի կազմակերպչական համագործակցականի տնօրէնի պաշտօնը, 1995-2000՝ Բուենոս Այրեսի Հայ Կեդրոնի թատերախմբում աշխատել է որպէս երաժշտական ձեւաւորող, 2003-10՝ դասաւանդել է Էկուադորի Կուենկայի Համալսարանի արուեստի ֆակուլտետում: 2004-8՝ եղել է Նոյն համալսարանի երաժշտական բաժնի տնօրէնը, ապա՝ (2008-10) համալսարանի երաժշտական կրթութեան մագիստրականի տնօրէն, 2009-10՝ Էկուադորի Կաթոլիկ Համալսարանի Կիտոյի երաժշտական կրթութեան մագիստրականի տնօրէն: 2011ից դասաւանդել է ԵՊԿում, ստանձնել փոխնախագահի պաշտօնը:

Գիտական եւ հրապարակախօսական յօդուածների, ռադիօ եւ հեռուստահաղորդումների հեղինակ է: Վարել է ՀԽՍՀ մշակոյթի բնագաւառում վարչական զա-

նազան պաշտօններ: Հեղինակ է *Աւեր Տէրպէրեան* (1989, ռուսերէն), *Երաժշտական դրամատուրգիա* (2007, ռուսերէն), *Աւեր Տէրպէրեան. Երկխօսութիւններ* (2011, ռուսերէն) հատորներին:

Ռուբէն Տէրպէրեանը մահացաւ 8 Յունուարի 2020ին:

ՀՀՀ



ՊԱՐԷՏ ՄԱՆՈՔ
(1958--2020)

Երուանդ Պարէտ Մանոք ծնած է 1958ին, Իսթանպուլ: Ծննդավայրի եւ Վենետիկի Միսիթարեան վարժարանները յաճախելէ ետք աւարտած է Վենետիկի Քա՛ Ֆոսքարի Համալսարանը՝ ստանալով «Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու դոկտոր» տիտղոսը: Հաստատուած է Փարիզ, ուր հանդէս կու գար որպէս հայերէնի եւ թրքերէնի ուսուցիչ եւ թարգմանիչ:

Հայ եւ թուրք ժողովուրդներու, դրական թէ ժխտական ամէն տեսակի կապերը իր մասնագիտութիւնը եղան: Մասնաւորապէս պրպտումներ կատարած է իսլամացած հայերու մասին՝ Թուրքիոյ մէջ թէ այլուր: Այս նիւթերու շուրջ բազմաթիւ դասախօսութիւններ տուաւ Ֆրանսա, Իտալիա, Մ. Նահանգներ եւ Հայաստան:

2013ին Իսթանպուլի մէջ լոյս տեսած իր *Dogru ile Bati Arasinda: San Lazzaro Sahnesi* թրքերէն գիրքը հիմնովին վերափոխեց ընդունուած այն տեսակէտը, թէ թրքերէն թատրոնը սկսած էր Պոլիս 1860ին: Այս հատորը փաստեց որ 1790ականներուն Վենետիկի միսիթարեան մայրավանքին մէջ, հայ վանականներու կողմէ, հայերէն տառերով գրուած եւ խաղցուած են առաջին թրքերէն խաղերը:

Պարէտ Մանոք 30 տարի դասաւանդեց Վենետիկի Քա՛ Ֆոսքարի Համալսարանի կազմակերպած հայոց լեզուի եւ մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքներուն մէջ:

Երուանդ Պարէտ Մանոք պարգետրուած է հայրապետական կոնդակով գեր. հայր Լեւոն արք. Զեքիեանի կողմէ:

Պարէտ Մանոք մահացաւ 9 Փետրուար 2020ին, Փարիզ:

ՀՀՀ



ՍԱՄՈՒԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(1961--2020)

Անուանի յուշարձանագէտ, պատմաբան, բանահաւաք, Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամի (ՀՃՈՀ) երեսնեան գրասենեակի նախագահ Սամուէլ Գէորգի Կարապետեանը ծնուել է 1961 Յուլիսի 30ին, գրող Գէորգ Կարապետեանի ընտանիքում: Արմատներով՝ Տուրուբերան աշխարհի Արճէշ գաւառի Բերդաղ գիւղից է: Սկսած 1975ից ճամբորդել է Հայկական ԽՍՀ տարածքով բնութիւնը ուսումնասիրելու նպատակով, իսկ 1978ից լուսանկարում, չափում եւ նկարագրում է հայկական յուշարձանները ամբողջ Պատ-

մական Հայաստանի տարածքով: Երեք տասնամեակի ընթացքում հետազոտում եւ ցուցակագրում է Պատմական Հայաստանի հայ ճարտարապետության հազարաւոր նմուշներ:

Կարապետեանը յայտնի է որպէս ՀՀ հարեան պետութիւններում հայկական յուշարձանների նկատմամբ վերաբերմունքի քննադատ: Նա կարծում է, որ Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի իշխանութիւնները նպատակաւ ուղղում կերպով իրականացնում են հայկական յուշարձանների ոչնչացման քաղաքականութիւն: Իր փաստերը 2007ին ներկայացրել է ԱՄՆ խորհրդարանին եւ 2008ին՝ Մարդու Իրաւունքների Եւրոպական Դատարանին:

Երկար տարիներ՝ մինչեւ իր մահը, Կարապետեանը հանդիսացել է ՀՃՈՀի երեւանեան գրասենեակի ղեկավարը: Հեղինակել եւ խթանել է բազմաթիւ արժէքաւոր գրքեր, աշխատութիւններ՝ հայկական ճարտարապետութեան նուիրումով: Նշանաւոր է 1990-2020ականներին հրատարակուած մատենաշարը, որը հաշւում է 19 գիրք.- *Թիֆլիսի քաղաքագութիւնները* (2003), *Հիւսիսային Արցախ* (2004), *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում* (1999), *Վրաց պետական քաղաքականութիւնը եւ հայ մշակոյթի յուշարձանները* (1998), *Բուն Աղուանքի հայերէն վիմագրերը* (1997), *Կովկասեան թանգարանի հայկական հաւաքածուն* (2004), *Կեանքիս յուշերից* (2007), *Ջաւախք* (2006), *Հայերը Կախէթում* (2004), *Յուշագրական ժառանգութիւն* (2011), *Ուղեգնացական ակնարկներ* (2010), *Ցեղասպանութիւնը վերապրածների ծննդավայրերը Լիբանանի տապանազրերում* (2018), *Դադի վանքի վերանորոգումը 1997-2011թթ.* (2015), *Արցախի եւ Սիւնիքի մելիքական ապարանքները* (2001), *Արցախի կամուրջները* (2009), *Արտազի երեք վանքերը* (2012), *Խոջիվանք* (2020):

ՀՃՈՀի կողմից ձեռնարկել է *Հայաստանի պատմութիւն* մատենաշարը՝ կազմուած 36 հատորից: 2019ի Դեկտեմբերի դրութեամբ լոյս է տեսել մատենաշարի առաջին չորս հատորը՝ *Հայոց ծոր* (2015), *Սալմաստ* (2017), *Արծկէ* (2018), *Մոսաւկանք* (2019):

2007ին արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ մարդասիրական գիտութիւններում ունեցած ներդրումների համար, 2004ին՝ Արցախի Հանրապետութեան (ԱՀ) Մեսրոպ Մաշտոց շքանշանին եւ ԱՀ Եղիշէի անուան գրականութեան մրցանակին: Իր գործունէութեան համար Վրաստանում յայտարարուած էր անցանկալի անձ:

Սամուէլ Կարապետեանը մահացաւ 27 Փետրուար 2020ին, Երեւանում:

ՀՀՀ



ԳԱՐԻԻԷԼ ՍՈՒԼԹԱՆԵԱՆ
(1929--2020)

Պատմաբան Գաբրիէլ Սուլթանեանը ծնուել է 18 Յուլիսի 1929ին, Կիպրոսում: Սովորել է Մելգոնեան Կրթական Հաստատութիւնում, այնուհետեւ գործի բերումով մեկնել Մանչեստր եւ հասել հիւսուածեղէնի ոլորտի բարձունքներին, որից յետոյ թողել է ամէն ինչ եւ ամբողջութեամբ նուիրուել հայագիտութեանը: Երբ պատրաստել է առաջին մեհենագրերի վերծանութեան փորձը անգլե-

րէնով եւ ուղարկել հոլանդացի նշանատր հայագէտ Եոս Վայթենբերգին, նրա պատասխանը եղել է. «դու ո՞վ ես, նորելու՛կ, որ բոլոր գիտնականներին իմաստակի տեղ ես դրել»: Երբ Սուլթանեանը նրան ուղարկեց երկրորդ գիրքը, գիտնականը շնորհակալական նամակ գրեց, իսկ երրորդ գրքից յետոյ Վայթենբերգն իր պատասխան նամակում գրել է. «այս գիտութիւնը քո դրած հիմքերի վրայ պէտք է առաջ գնայ»:

Սուլթանեանի պրպտումների շնորհիւ, 2004ից սկսեալ հայոց նախապատմութիւնը ուսումնասիրելու նոր արահետ է գոյացել, ի տարբերութիւն՝ ասանդութիւնների, հնչիւնաբանական ուսումնասիրութիւնների վրայ հիմնուած ենթադրութիւնների:

Սուլթանեանը հեղինակել է *The Pre-History of the Armenians* (2003), *The Pre-History of the Armenians Vol. 2: The Proto-Armenian Hieroglyphic Inscriptions of Aram* (2004), *Pre-History of the Armenians, Vol. 3: The Anatolian Hieroglyphic Inscriptions of the Proto-Armenians* (2009), *The Pre-History of the Armenians, Vol. 4: The Homonymous Root Words of the Proto-Armenian Hieroglyphic Inscriptions of Anatolia* (2013), *The History of Bishop Sebeos: Redefining a Seventh Century Voice from Armenia* (2007), *The History of the Armenians and Moses Khorenatsi* (2012), *Հայոց պատմութիւնը եւ Մովսէս Խորենացին* (2014), եւ *Նախահայերէն լեզուն, նոյնահնչիւն բառարմարները եւ Նորայրի Կարաթեփէի արձանագրութիւնը* (2019):

Գաբրիէլ Սուլթանեանը մահացել է 10 Մարտ 2020ին, Երեւանում:

<<<



ՆԻՆԱ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ ԶԻՏԷՃԵԱՆ
(1925–2020)

Նինա Նազարեթեան-Ճիտէճեան ծնած էր Պոստոն, 1925ին, Թեհրանի մէջ վաճառատուն հաստատած ընտանիքի մէջ: 1947ին Նինա առաջին անգամ կ'այցելէ Լիբանան, ուր կը հանդիպի իր ապագայ ամուսինին՝ տղք. Երուանդ Ճիտէճեանի (որուն հետ կ'ամուսնանայ տարի մը ետք) եւ կը շփուի իր ապագայ հետազօտական աշխարհին հետ:

Բժշկագիտական համաժողովներու ատեն Նինային կ'առաջարկուի ընկերակցիլ այցելու բժիշկներուն ու անոնց ընտանիքներուն՝ ծանօթացնելու Լիբանանի զբօսաշրջական վայրերուն: Անբաւարար գտնելով Լիբանանի հնավայրերուն մասին զբօսաշրջական տուեալները եւ իտես հարուստ ժառանգին, Նինա կ'արձանագրուի Պէյրութի Ամերիկեան Համալսարանի պատմութեան եւ հնագիտութեան դասընթացներուն:

1965ին ան կը վկայուի պատմութեան եւ հնագիտութեան մասնագիտութեամբ, պաշտպանելով Պիպլոս-Ճիպէլլի մասին մագիստրական թեզ: Այնուհետեւ, ամբողջ 50 տարի ան անխնջ կերպով պրպտեց, ուսումնասիրեց եւ հրատարակութեան ներկայացուց Լիբանանի անցեալին վերաբերող 18 հետազօտական հատոր:

Իր առաջին գիրքը՝ *Byblos Through the Ages* (1968), մեծապէս կը գնահատուի Պիպլոսը պեղած Մորիս Տիմանի կողմէ: Վերջինս կը մաղթէ որ Ճիտէճեան կանգ չառնէ այս աշխատանքով: Կը յաջորդեն այլ հատորներ՝ *Tyre Through the Ages*,

(1969), *Sidon Through the Ages* (1973), *Beirut Through the Ages* (1973), *Baalbeck, Heliopolis, the City of the Sun* (1974), *Tripoli Through the Ages* (2007): Ասոնք բոլորը լոյս կը տեսնեն թէ՛ անգլերէն եւ թէ՛ ֆրանսերէն: Միաժամանակ լոյս կը տեսնեն նաեւ ընդհանրական գիրքեր, ինչպէս՝ *Lebanon and the Greek World* (1996), *Archeology in Lebanon* (1998), *Stories and Myths of Ancient Lebanon* (Մոնա Պասիլիի լուսանկարներով) (1999), *History of Lebanon Through Pictures* (1986-2001, 4 հատոր), *Lebanon: A Mosaic of Cultures* (2001), *I Love Lebanon* (1982-1992), *The Greeks and the Phoenicians in Antiquity* (2003), եւ՝ *Beirut - A City of Contrast* (2008):

Ճիտէճեան մասնակցած է բազմաթիւ գիտաժողովներու եւ դասախօսութիւններու: Ան հիմնադիրներէն է Պապլէքի միջազգային փառատներու շարքին, որ սկիզբ առաւ 1957ին եւ հիմնադիրն ու նախագահն էր Այնճարի Միջազգային Փառատոնին:

Առ ի գնահատում իր բեղուն եւ ուղենիշային հետազոտութիւններուն, Ճիտէճեան 1974ին Լիբանանի հանրապետութեան նախագահ Շարլ Հելուի կողմէ պարգեատրուեցաւ Մայրիներու Ասպետի շքանշանով, 1993ին՝ նախագահ Հրաւի Մայրիներու Զօրավարի շքանշանով պարգեատրեց գինք, իսկ 2000ին նախագահ Էմիլ Լահուտ՝ Մայրիներու Հրամանատարի շքանշանով: 1999ին ան պարգեատրուեցաւ նաեւ Ս. Մեսրոպ Մաշտոցի շքանշանով՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին կողմէ: 2001ին ան արժանացաւ Սաիտ Աքլ գրական մրցանակին՝ *Yevant Jidejian M.D., the Surgeon and the Man* եւ մանկական՝ *Animals of Ancient Lebanon from A-Z* գիրքին համար:

Ճիտէճեան գերիշխած է լիբանանեան հնագիտութեան ասպարէզը շուրջ կէս դար եւ մեծապէս նպաստած Լիբանանի հնագիտութեան ժառանգին գիտական շրջանառման: Անոր ուսումնասիրութիւնները Լիբանանի անցեալին ժառանգութիւնը մեծապէս կը ծանօթացնեն թէ՛ Լիբանան այցելող զբօսաշրջիկներուն եւ թէ՛ Լիբանան հաւատարմագրող օտար պաշտօնատարներուն:

Նինա Ճիտէճեանի հետազօտական գրիչը դադրեցաւ անոր վերջին շունչին հետ, իր սիրելի Պէյրութի մէջ, 6 Ապրիլ 2020ին:

ԱՐՏԱ ԷՔՄԷԺԻ (ARDA.EKMEKJI@haigazian.edu.lb)



ՌՈՐԵՐՏ ԹՈՒՄԱՆԵԱՆ
(1937--2020)

Բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Ռորերտ Մարկոսի Թոմասյանը ծնունդ է 1937ի Ապրիլի 20ին, Երեւանում, վանեցի ծնողների ընտանիքում: 1966ին ասարտել է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտետի հայոց լեզու եւ գրականութիւն բաժինը եւ նոյն տարին ընդունուել է ՀՀ ԳԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի թեկնածուական բաժին, որը ասարտելուց յետոյ աշխատանքի է անցել ինստիտուտի ընդհանուր լեզուաբանութեան բաժնի փորձառա-

կան հնչինաբանութեան խումբ:

Թոմասյանը հայագիտութեան մէջ մեծ յաջողութեամբ կիրառել է լեզուաբանութեան մէջ մշակուող նորագոյն փորձառական մեթոդները: Ճշգրիտ մեթոդների

արդիւնքների հաշուառմամբ նա փայլուն յաջողութեամբ պաշտպանել է թեկնածուական, յետագայում՝ դոկտորական ատենախօսութիւնը:

1966ից նա իր գիտական գործունէութեամբ սերտօրէն կապուած է եղել ԳԱ լեզուի ինստիտուտի հետ: Աւելի քան կէս դար դասաւանդել է ՀՀ ԲՈՒՀերում (ԵՊՀ, Վ. Բրիւսովի անուան լեզուաբանութեան ինստիտուտ եւն.): Վերջին տասնամեակում նա լեզուի ինստիտուտի արեւմտահայերէնի բաժնի առաջատար գիտաշխատակիցներից էր:

1990ականների կէսերից շուրջ չորս տարի Թոխմախեանը աշխատել է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանում եւ ճեմարանում: Ամէնուրեք նա բարձր է գնահատուել եւ սիրուել ուսանողութեան եւ տնօրէնութեան կողմից: Դա վկայում է այն մասին, որ անուանի հայերէնագէտը ոչ միայն գիտական խորութեամբ եւ միաժամանակ մատչելիութեամբ կարողացել է մատուցել լեզուաբանութեան հիմունքներն ու նորագոյն նուաճումները, այլեւ հանդէս բերել հոգատար եւ ազնուագոյն մանկավարժի յատկանիշեր:

Ռոբերտ Թոխմախեանը հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածների, մենագրութիւնների, մասնակցել է բազմաթիւ միջազգային լեզուաբանական գիտաժողովների: Նրա *Հայերէնի հնչաշղթան* մենագրութիւնը կարող է օրինակ ծառայել երիտասարդ հայերէնագէտներին՝ վիճակագրական մեթոդների արդիւնաւէտ օգտագործմամբ որակական նոր մակարդակի բարձրացնելու հայերէնագիտութիւնը: Հեղինակ է նաեւ *Շարահիւսութիւն (կապակցաբանութիւն). վարժութիւններ եւ գիրական գործնական աշխատանքներ* (Ֆ. Խլոթեանի հեղինակակցութեամբ, 2011), *Արեւմտահայերէնի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում* (2015, Արտեմ Սարգսեանի հեղինակակցութեամբ):

Ռոբերտ Թոխմախեանը մահացաւ 16 Յունիս 2020ին, Երեւանում:

ԱՐՏԵՄ ՍԱՐԳՍԵԱՆ



ՀԱՄԼԷՏ ԳԷՈՐԳԵԱՆ
(1951–2020)

Պատմաբան Համլէտ Գէորգեանը ծնուել է 1951 Մարտի 1ին, Ապարանի շրջանի Մելիք գիւղում: 1970-72՝ ծառայել է ԽՍՀՄ բանակում: 1972-74՝ որպէս բանուոր աշխատել է Աշտարակում: 1974-79՝ սովորել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի փիլիսոփայութեան բաժնում: 1979-82՝ աշխատանքի է անցել Նայիրիի շրջանի թիւ 5 երեկոյեան միջնակարգ դպրոցում որպէս ուսմասվար: Միաժամանակ փիլիսոփայութիւն է դասաւանդել Երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտում: 1982-91՝ եղել է ուսուցիչների կատարելագործման հանրապետական ինստիտուտի հասարակագիտութեան ամբիոնի աւագ դասախօս: 1991ին ընտրուել է «Հայ Շինական» բարեգործական միութեան նախագահ: Զուգահեռաբար հայոց պատմութիւն է դասաւանդել ԵՊՀ Իջեանի մասնաճիւղում եւ Վալերի Բրիւսովի անուան օտար լեզուների ինստիտուտում: Մասնակցել է արցախեան պատերազմին:

1999ից աշխատել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայութեան եւ իրատունքի ինստիտուտում որպէս աւագ գիտաշխատող: 2002ից համատեղութեան կարգով Երեւանի Պետա-

կան Ճարտարագիտական Համալսարանի պատմության եւ քաղաքագիտության ամբիոնի դասախօս է, 2006ից՝ դոցենտ: 2011ին պաշտպանել է դոկտորականը, 2012ին ստացել պրոֆեսորի կոչում: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի հիմնախնդիրները: Հեղինակ է 10 պատմագիտական մենագրությունների՝ *Նիկոլ Դուման*, (2002, 2003), *Դրօ* (1999, 2000, 2007), *Սեբաստացի Մուրադ* (2003), *Սեդրակ Ջալալեան* (2009), *Ազատագրական պայքարի հերոսապատումից* (2006), *Էջեր հայոց ազատամարտի* (2005, 2010), *Պեյսոն* (1994, 1996, 2000), *Հանգեզուրի հերոսամարտը (1905-1906)* (Գորիս, 2010), *Եսպոն* (Յովհաննէս Պարոնեան). *գործը եւ յուշերը* (2011), *Արցախի եւ Գանձակի հերոսամարտերը (1905-1906)* (Գորիս, 2011), *Ազատագրական պայքարի մարտավարությունը Վան-Վասպուրականում 1900-1908թթ.* (2011), նաեւ երեք գիտաուսումնական աշխատանքների եւ բազմաթիւ յօդուածների: Պարգևատրուել է «Շուշիի ազատագրման» եւ «Դրաստամատ Կանայեան» մեդալներով:

Մահացաւ 24 Յունիս 2020ին, Երեւանում, թագաժահիրից:

ՀՀՀ



ՀԱՍԼԷՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (1948--2020)

Պատմաբան Համլետ Մալխասի Յարութինեանը ծնուել է 1948ի Սեպտեմբերի 25ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշէն գիւղում: 1973ին ասարտել է Կիրովականի Մանկավարժական Ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1969-78՝ Սեւանի շրջանի Գեղամասան եւ Լճաշէն գիւղերի միջնակարգ դպրոցներում աշխատել է նախ որպէս պատմության ուսուցիչ, այնուհետեւ՝ ուսումնասլար: 1978 Յունիս-Դեկտեմբերին եղել է ամառ գիտաշխատող Հայաստանի Ազգագրութեան Պետական Թանգարանում, իսկ 1978ի Դեկտեմբերին աշխատանքի է անցել Հայաստանի ԳԱ պատմութեան ինստիտուտում, որտեղ 1982ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1991ին՝ դոկտորական: 2005ին նրան շնորհուել է պրոֆեսորի կոչում:

Յարութինեանը գիտութեան փորձառու կազմակերպիչ էր: 2003-5՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի Հայաստանի Առաջին Հանրապետութեան պատմութեան բաժնի վարիչն էր, 2010-20՝ նոյն հաստատութեան նորագոյն պատմութեան բաժնի վարիչը:

Զաւիազանց լայն էր նրա գիտական հետաքրքրութիւնների շրջանակը: Նրա գիտական վաստակը մեծապէս դրսեւորուել է Հայաստանի ԺԹ-Ի. դարերի պատմութեան ուսումնասիրութեան բնագաւառում: Յարութինեանը ուշադրութիւնը սեւեռել է մասնատրապէս ժողովրդագրական գործընթացների, հասարակութեան ընկերադասակարգային կառուցուածքի, Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի, Նոր Բայազետի Գաւառի պատմութեան եւ այլ հիմնահարցերի վրայ: Նրա հեղինակութիւններից են.- *Հայկական ՍՍՀ բանուոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման եւ զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը)* (1983), *Սովետական Հայաստանի բանուոր*

դասակարգը (1938-1960 թթ.) (1987): Նա համակողմանի վերլուծել է 1938-60ի ՀԽՍՀ բանուոր դասակարգի քանակական ու որակական, սեռատարիքային եւ ազգային կազմի փոփոխությունները, գործնական աշխուժությունը, Հայկումկուսի կողմից բանուորների շրջանում իրականացուող գաղափարական աշխատանքները եւ յարակից այլ հարցեր: Հարկ է հաստատել, որ այդ ժամանակաշրջանի պատմութեամբ առ այսօր զբաղուող մասնագէտների համար իր ուսումնասիրությունները կարելի էր եւ օգտակար: Յարութիւնեանը լուսաբանել է 1918-21՝ Արցախում հայկական իշխանութեան մարմինների ձեւաւորման գործընթացը, երկրամասի հայութեան համագումարները, թուրքերի եւ ադրբեջանցիների դէմ հայութեան յամառ պայքարը, Արցախի հարցում Անտանտի տէրութիւնների ու Խորհրդային Ռուսաստանի քաղաքականութիւնը, Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցելու գործընթացը եւ 1996ին հրատարակել՝ *Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ.* մենագրութիւնը, որը երեւանում հրատարակուել է նաեւ անգլերէն 2019ին՝ Hamlet M. Harutyunyan, *Mountainous Karabagh in 1918-1921*: Նրա *Նոր Բայազէտի Գաւառը 1828-1913 թթ.* (2008), *Նոր Բայազէտի Գաւառը 1914-1920 թթ.* (2012) եւ *Նոր Բայազէտի Գաւառը 1920-1930 թթ.* (2015) մենագրութիւններում աղբիւրագիտական հարուստ նիւթի հիման վրայ ներկայացուած է գաւառի պատմութիւնը սկսած Արեւելեան Հայաստանի՝ Ռուսական Կայսրութեանը միացումից մինչեւ 1930՝ Խորհրդային Հայաստանում գաւառների փոխարէն շրջանների ստեղծումը: Ընդգրկուն է բարձրացուած հարցերի շրջանակը՝ Ռուսաստանի ռազմավարութեան ենթահողում նորագրաւեալ երկրամասի վարչաժողովրդագրական հիմնահարց, գաւառի վարչատարածքային կառուցուածք, ժողովրդագրական տեղաշարժեր, բնակչութեան թուաքանակ, ազգային, էթնօղաւանաբանական, սեռատարիքային, ընկերատնտեսական, հոգեւոր-եկեղեցական, կրթամշակույթային, Հայոց Յեղասպանութիւնից մագապուրծ արեւմտահայերի ու որբերի՝ գաւառում տեղաւորման, նրանց խնամքի կազմակերպման աշխատանքներ, ՀՀ եւ Խորհրդային Հայաստանի կազմում գաւառի ունեցած դերն ու նշանակութիւնը եւ այլ հարցեր, որոնց խոր ու համակողմանի վերլուծութիւնը ի յայտ է բերում Նոր Բայազէտի Գաւառի ամբողջական պատկերը: Այս գրքերը, որոնցից առաջինը թարգմանուել է անգլերէն (Hamlet M. Harutyunyan, *The County of Nor Bayazet 1828-1913*, Yerevan, 2020), կարող են նախօրինակ դառնալ Հայաստանի այլ տարածաշրջանների պատմութիւնը շարադրելիս:

Վերջին տարիներին Յարութիւնեանը ուսումնասիրում էր Երեւանի Նահանգի ամբողջական պատմութիւնը՝ ծրագրելով ներկայացնել դրա ստեղծման, վարչատարածքային կառուցուածքի, հասարակական-քաղաքական, ընկերատնտեսական եւ մշակութային զարգացման հիմնահարցերը: Ցաւօք, նա չկարողացաւ տեսնել իր՝ *Երեւանի Նահանգի վարչաժողովրդագրական պատկերը, արհեստներն ու առեւտուրը* մենագրութիւնը, որը լոյս տեսաւ նրա մահից յետոյ:

Յարութիւնեանը սկզբունքային պատմաբան եւ բարեխիղճ գիտական ղեկավար էր: ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հրատարակած *Հայոց պատմութիւն* ակադեմիական նոր հրատարակութեան IV հատորի երկու գրքերում (2010, 2016) տեղ են գտել նրա յօդուածները (նա երկրորդ գրքի պատասխանատու խմբագիրն է): Նա նաեւ ուսումնական դասագրքերի համահեղինակ է: Նա աւելի քան 40 տարի զբաղուել է նաեւ մանկավարժական աշխատանքով: 1994-2020ին եղել է Գաւառի Պետական Համալսարանի պատմութեան ամբիոնի վարիչը, դասախօսել եւ յատուկ դասընթացներ է վարել նաեւ ԵՊՀ-ում, Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանում, Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանում, Վանաձորի Պետա-

կան Համալսարանում, «Գլաժոր» եւ «Հրաչեայ Աճառեան» Համալսարաններում, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում, մասնակցել գիտաժողովների:

Իր գիտական, քաղաքացիական եւ մարդկային արժանիքների շնորհիւ Յարութիւնեանը հայ պատմաբանների միջավայրում մեծ հեղինակութիւն էր վայելում:

Համլէտ Յարութիւնեանը մահկանացուն կնքեց 5 Յուլիս 2020ին, Երեւանում:

ՀԱՍՏ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ (hamosukiasyan@mail.ru)



ՌՈՒՔԷՆ ՍԱՔԱՊԵՏՈՅԵԱՆ
(1944--2020)

Հայրենի լեզուաբան, դասախօս, Ռուբէն Կարապետի Սաքապետոյեանը ծնած է Պէյրուֆ, 11 Հոկտեմբեր 1944ին: 1947ին ընտանիքին հետ կը ներգաղթէ Հայաստան, ուր նախնական ուսումը ստանալէ ետք 1960ին կ'ընդունուի ԵՊՀ բանասիրական բաժանմունքը, որ կ'աւարտէ 1966ին: Ուսանողական տարիներուն կը ցուցաբերէ նաեւ աշխուժ ազգային-հասարակական գործունէութիւն, որուն գագաթնակէտը կ'ըլլայ 1966 Ապրիլ 24ի ուսանողական հաւաքը եւ եօթնօրեայ բանտարկութիւնը, ի միջի այլոց խցակից ունենալով

Լեւոն Տէր Պետրոսեանը եւ ուրիշներ:

1967էն մինչեւ մահը՝ ԵՊՀ զանազան բաժանմունքներու, բայց յատկապէս բանասիրական բաժանմունքին մէջ, կը դասաւանդէ լեզուագիտական նիւթեր, որոնք կը դառնան իր յետագայ ուսումնասիրութիւններուն կիզակէտը: Առ ի գնահատանք դասախօսական աւելի քան երեսնամեայ վաստակին 2004ին կը ստանայ ղոցենտի, իսկ 2005ին փրոֆեսորի կոչում: 2009-14՝ Սաքապետոյան կը վարէ ԵՊՀ հայոց լեզուի պատմութեան ամբիոնը: Տասնամեակ մը կը դասաւանդէ նաեւ Եղեգնաձորի «Գիտելիք» Համալսարանին մէջ:

1969ին կ'աւարտէ ԵՊՀ ասպիրանտուրան՝ ոճաբանութիւն մասնագիտութեամբ: 1974ին կը պաշտպանէ «Եղիշէ Զարենցի արձակի լեզուն եւ ոճը» ատենախօսութիւնը, որով կը ստանայ բանասիրական գիտութիւններու թեկնածուի աստիճան: Այդ աշխատութիւնը՝ նոյն վերնագրով, յետագային լոյս կը տեսնէ Պէյրուֆի մէջ (Հիւսիսեան մատենաշար, թիւ 1, Իրտ. ՀԲԸՄԻ Լիբանանի շրջանակային յանձնաժողովի, Պէյրուֆ, 1993):

1991-92՝ Պէյրուֆի մէջ տնօրինած է ՀԲԸՄ Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկը, ուր նաեւ դասախօսած է եւ հրատարակած ու խմբագրած է *Հիւսիսեան հայագիտական հանդէսը* (գիրք Ա., Պէյրուֆ, 1993):

Սաքապետոյեան իր ներգաղթած ծնողներէն եւ հարազատներէն սորված էր արեւմտահայերէն: Իր նախնական գիտելիքները դնելով լեզուագիտական ամուր հիմքի վրայ, ան իր յետագայ աշխատանքները մեծաւ մասամբ նուիրեց արեւմտահայ քերականութեան գիտական ուսումնասիրութեան՝ առաւելաբար կեդրոնանալով բառագիտութեան վրայ, որուն վկան են իր յօդուածներն ու ուսումնասիրութիւնները եւ հրատարակութիւնները, յատկապէս «Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի բառապաշարային առաձնայատկութիւնները (զուգադրական քննութիւն)» ատենախօսութիւնը, որով ստացաւ բանասիրական գիտութիւններու դոկտորի

աստիճան՝ 2004ին: (Աշխատութիւնը նոյն վերնագրով լոյս տեսած է 2004ին, Երեւան): Լեզուաբանական հետաքրքրութիւններու նոյն ծիրէն ներս Սաքապետոյեան կը հրատարակէ *Արեւմտահայերէնի գործնական աշխատանքների և վարժութիւնների ձեռնարկ (ուսումնական ձեռնարկ)* (համահեղինակ՝ Եւրի Աւետիսեան) (1997), *Արեւմտահայերէն-արեւելահայերէն ուղղախօսական-բացատրական բառարան* (2000), որ կը պարունակէ աւելի քան 16000 բառ եւ դարձուածքային միատոր, *Արեւմտահայերէնի դասագիրք* (2006) եւ *Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան* (2011) գիրքերը:

Սաքապետոյեան հեղինակ է նաեւ *Բառգրքոյկ – նոր եւ նորակազմ բառեր հայերէնում* (2014), *Ուղեցոյց* (2008), Ս. Գալստեանի հետ խմբագրած է *Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանութիւն, բառագիտութիւն)* բուհական դասագիրքը (2017), ինչպէս նաեւ այլոց հետ համահեղինակած կամ խմբագրած է հանրակրթական եւ աւագ դպրոցներու զանազան դասարաններու եւ հոսքերու *Հայոց լեզու* դասագիրքեր (2009-16), համալսարանի մուտքի քննութեանց պատրաստող *Հայոց լեզու եւ հայ գրականութիւն. պեղական աւարական եւ միասնական քննութիւնների առաջադրանքների շրջմարան* գիրքերը, (2012-18), *Հայոց լեզուի պատմութեան դասընթացը* (2016): Իր վերջին հրատարակութիւնը եղաւ *Գեղարունկական թարգմանութիւնը եւ լեզուական նորմը* համառօտ աշխատութիւնը (2016): Խմբագրած է նաեւ Սասուն Գրիգորեանի *Բազմապատկան դրամատուրգ* գիրքը (1999), ինչպէս նաեւ դասագիրքեր՝ *Ժամանակակից հայոց լեզուի դասընթաց* (2009), *Հայկական բնաշխարհ* (2002):

Սաքապետոյեան կրքոտ անձնատրութիւն էր՝ իր պաշտպանած թեզերուն մէջ հաստատակամ, երբեմն նոյնիսկ անզիջող: Իբրեւ դասախօս ան խիստ պահանջկոտ էր, որովհետեւ կը հաւատար, որ բանասիրականի ուսանողը պէտք է լաւ տիրապետէ հայերէնին: Պաշտամունքի հասնող ակնածանք ունէր ԵՊՀ իր լեզուաբան ուսուցիչներուն հանդէպ, որոնց մասին միշտ կ'արտայայտուէր խնայաւառութեամբ եւ յարգանքով: Հակառակ նոր ուղղագրութեան ջերմ պաշտպան մը ըլլալուն (այդ մասին ան ունէր իր անդրդուելի կեցուածքը), Սաքապետոյեան արեւմտահայերէնի լաւագոյն գիտակներէն էր ՀՀի մէջ, եւ վերոնշեալ աշխատութիւնները արժէքատու գիտական գործեր են, որոնք օգտակար պիտի ըլլան արեւմտահայերէնի ուսումնասիրութեան: Զինք, ոչ մեծաթիւ այլոց հետ (Արտեմ Սարգսեան, Պետրոս Պետիրեան, Եւրի Աւետիսեան եւ ուրիշներ) կարելի է սեպել ՀՀի մէջ արեւմտահայերէնի ուսումնասիրութեան հիմնադիրներէն:


Ան լաւ ընտանիքի հայր ու հիւրասէր բարեկամ էր, որուն տունն ու սեղանը բաց էին նոյնիսկ յիշատակահալ ուսանողներու:

Ռուբէն Կ. Սաքապետոյեան մահացաւ Երեւանի մէջ, Պսակաձեւ ժահրի պատճառած սրտի տագնապի հետեւանքով, 21 Յուլիս 2020ին:

ԱՐՄԷՆ ԻԻՐՆԷՇԼԵԱՆ (urneshlian@yahoo.com)

ԳՐԻԳՈՐ ԱՐԷՇԵԱՆ
(1949–2020)

Հնագէտ Գրիգոր Եւգենիի Արէշեանը ծնուել է 13 Մայիս 1949ին Երեւանում: 1966-70՝ սովորել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտետում: 1975ին պաշտպանել է թեկնածոական: Նրա ղեկավարը եւ ուսուցիչը եղել է ականաւոր հնագէտ, էրմիտաժի տնօրէն, ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկին:



1970-73՝ իբրեւ գիտաշխատող աշխատել է ԵՊՀ հնագիտութեան եւ ազգագրութեան ամբիոնում, 1973-80՝ ԵՊՀ հայագիտութեան կենտրոնում: 1981ին նրա նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ ԵՊՀում ստեղծուել է հնագիտական հետազոտութիւնների գիտաշխատանոց որը նա ղեկավարել է մինչեւ 1987: 1987-91՝ նա զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ ՀԱԻի փոխտնօրէնի պաշտօնը: ՀՀ անկախութեան առաջին տարիներին ներգրաւուել է երկրի կառավարման գործում, 1991-92՝ եղել ՀՀ պետական նախարար, ղեկավարել նաեւ հայկական պատուիրակութիւնը ՌԴի հետ ընթացող բանակցութիւններում:

1993ին Արէշեանը բուժման նպատակով տեղափոխուել է ԱՄՆ, որտեղ, բուժմանը զուգընթաց, զբաղուել է գիտամանկավարժական գործունէութեամբ, դասաւանդել մասնաւորապէս՝ Կալիֆորնիայի, Չիկագոյի, Վիսկոնսինի համալսարաններում: 2001ից դասաւանդել եւ գիտական տարբեր պաշտօններ է զբաղեցրել Լոս Անջելըսի Կալիֆորնիայի Համալսարանի Կոթսէնի անուան հնագիտութեան ինստիտուտում՝ 2010ին դառնալով այդ հաստատութեան փոխտնօրէնը: 2016ին նա վերադարձել է հայրենիք, դասաւանդել Հայաստանի Ամերիկեան Համալսարանում եւ դարձել այդ ուսումնական հիմնարկի պրոֆեսորը:

Մեծ է Արէշեանի աւանդը ՀՀ հնագիտական յուշարձանների դաշտային հետազոտութիւնների ոլորտում: Դեռեւս ուսանողական տարիներին նա մասնակցել է Լճաշէնի, Արթիկի դամբարանադաշտերի, Կարմիր Բլուրի պեղումներին: 1970-80ականներին ղեկավարել է Ադաբլուրի, Մոխրաբլուրի, Նորաբացի բլուր բնակատեղիների, Բերքաբերի (Յակոբ Սիմոնեանի հետ համատեղ), Մայիսեանի, Շամիրամի դամբարանադաշտերի պեղումները: Կոթսէնի անուան հնագիտութեան ինստիտուտում աշխատելու տարիներին նրա ջանքերով եւ ղեկավարութեամբ մշակուել են եւ կեանքի կոչուել հայ-ամերիկեան մի շարք համատեղ ծրագրեր, որոնք իրենց նպաստն են բերել հայաստանեան հնագիտութեան միջազգայնացմանը, հայ-ամերիկեան գիտական կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը: Մասնաւորապէս 2008-12ին, Արէշեանը, որպէս հայ-ամերիկեան արշաւախմբի ամերիկեան կողմի ղեկավար, աշխուժօրէն մասնակցել է միջազգային լայն արձագանգ ստացած Վայոց Ձորի մարզի Արենի-1 քարայրի պեղումներին, դրանց արդիւնքների ուսումնասիրութեանն ու հանրահռչակմանը: 2011ին նրա ջանքերով ձեւաւորուել է եւ մէկ հայ-ամերիկեան արշաւախումբ, որը վերսկսել եւ ներկայումս շարունակում է Մասիս Բլուր նեոլիթեան հնավայրի պեղումներն ու նիւթերի ուսումնասիրութիւնները:

Արէշեանի հրատարակած ուսումնասիրութիւններից շատերն ուղենիշային դեր են ունեցել Հայկական Լեոնաշխարհի հնագիտական մշակոյթների ժամանակագրութեան եւ պարբերացման ներկայ համակարգի ձեւաւորման, այդ տարածաշրջանի հնագոյն հասարակութիւնների հասարակական եւ ընկերային միջավայրերի առանձնայատկութիւնների վերհանման, արժեւորման համար: Նա աւելի քան 150 գիտական աշխատանքների հեղինակ է: Գիտական նշանակալից արդիւնքների համար 2014ին նա ընտրուել է ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ:

Գրիգոր Արէշեանը մահացաւ 2 Օգոստոս 2020ին, Երեւանում:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ եւ ԵՊՀ ՀԱ ԱՄԲԻՈՆ



ԿԻՄ ԱՂԱՔԷԿԵԱՆ
(1938--2020)

Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր (1994), պրոֆեսոր (2006), Կիմ Բագրատի Աղաբեկեանը ծնունդ է 15 Մարտ 1938ին, Գորիսի շրջանի Եայջի (յետոյ՝ Հարճիս) գիւղում: 1966ին աւարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտը: 1972ին՝ «Գուրգէն Մահարի» նիւթով ատենախօսութիւն է պաշտպանել եւ ստացել բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճան: 1968-69՝ աշխատել է ԵՊՀ հայ գրականութեան ամբիոնում որպէս լաբորանտ: 1971ից դասախօսել է ԵՊՀում: 1978ից եղել է ԽՍՀՄ Գրողների Միութեան անդամ: Ուսումնասիրութիւնները վերաբերում են հայ նորագոյն գրականութեան ուրուշակի հարցերի՝ *Գուրգէն Մահարի* (1975), *Երեք դիմանկար* (1983, գիրքը նուիրուած է Բաղիշ Յովսէփեանի, Մկրտիչ Սարգսեանի եւ Զօրայր Խալափեանի երկերի քննութեանը), *Հրանտ Մաթեոսեան*. Ծմակուտի *վիպասքը* (1988), *Արդի հայ արձակի զարգացման միտումները (1960-80 թուականներ)* (1992), *Յակոբ Օջական (սպիտակագործական աշխարհի արահեպներում)* (2006):

Կիմ Աղաբեկեանը մահացաւ 25 Յուլիսի 2020ին, Երեւանում:

ՀՀՀ



ԻԳԻԹ ՂԱՐԻԲԵԱՆ
(1937--2020)

Պատմաբան, հնագէտ Իգիթ Գարեգինի Ղարիբեանը ծնունդ է 1937ի Դեկտեմբերի 1ին, Կոտայքի մարզի Հրազդանի շրջանի Մեղրաձոր գիւղում: 1939ին ընտանիքը տեղափոխուել է Երեւան: 1957-60՝ ծառայել է խորհրդային բանակում: 1960-65՝ սովորել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտում, 1970ին պաշտպանել է թեկնածուական՝ «Լօռէ ամրոցը եւ նրա պեղումները» նիւթով: 1974ին նրան շնորհուել է դոցենտի կոչում: 1986ին պաշտպանել է դոկտորական՝ «Գլաձոր (տեղագրութիւնը, պեղումները, վիմագրերը)» նիւթով: 1968ից դասաւանդում է ԵՊՀում: 2001-4՝ եղել է ԵՊՀ հնագիտութեան, 2005-9՝ ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտի հնագիտութեան եւ ազգագրութեան ամբիոնի վարիչ, 2000ին՝ Բնութեան եւ Հասարակութեան մասին Գիտութիւնների Միջազգային Ակադեմիայի իսկական անդամ: 2003ից համատեղութեամբ աշխատում է ՀՀ ԳԱԱ ՀԱԻի միջնադարեան հնագիտութեան բաժնում: 2005ին նրան շնորհուել է պրոֆեսորի կոչում:

Ղարիբեանի աշխատանքները վերաբերում են միջնադարեան Հայաստանի պատմութեանը: Նա հնագիտական արշաւախմբեր է ղեկավարել Կիւրիկեանների մայրաքաղաք Լօռէ քաղաք-ամրոցում (1966-74), Թանահատի վանական համալի-

րում (1970-82) եւ Բջնի ամրոցում (1977-80 եւ 2003-7): Մասնակցել է նաեւ Դուինի, Արմափրի, Գառնիի, Սպիտակի եւ Լճաշէնի հնագիտական պեղումներին:

Ղարիբեանը հեղինակ է միջնադարեան Հայաստանի պատմությանը, հնագիտությանը, վիմագրությանը, ճարտարապետությանը եւ նիւթական մշակոյթին վերաբերող շուրջ 70 յօդուածների եւ 4 մենագրութիւնների: Նա զեկուցումներով հանդէս է եկել միջազգային գիտաժողովներում: Հրատարակել է *Գլածոր (տեղադրութիւնը, պեղումները, վիմագիր արձանագրութիւնները)* (1983), *Հրաշագործ սուրբ Գեղարդը* (2003), *Լօռէ բերդաքաղաքը եւ նրա պեղումները* (2009), *Արծափ – Մեղրածոր* (2006) մենագրութիւնները:

Իգիթ Ղարիբեանը մահացել է 16 Օգոստոսի 2020ին, Երեւանում:

ՀՀՀ



ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆԵԱՆ
(1940–2020)

Բանահաւաք, բանագէտ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ երկամեայ աշխատակից Սվետլանա Աւետիսի Վարդանեանը ծնուել է 1940 Մայիսի 23ին՝ Բաքու քաղաքում, մանկավարժների ընտանիքում: Ծնողները Բաքու էին տեղափոխուել Արցախի Հաղործ շրջկենտրոնից (այն ժամանակ՝ ԼՂԻՄ Հաղործ շրջան): Սվետլանան հազիւ մէկ տարեկան էր, երբ հայրը մեկնում է ռազմաճակատ եւ զոհում համաշխարհային Բ. պատերազմում: Այդ տարիներին մայրը Սվետլանայի հետ վերադառնում է Արցախ, որտեղ սկսում է աշխատել Հաղործի միջնակարգ դպրոցում: 1947-52՝ սովորել է Հաղործի միջնակարգ դպրոցում, այնուհետեւ երբ տեղափոխուել են Երեւան՝ ուսումը շարունակել է մայրաքաղաքում:

1957ին ընդունում է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայկական բաժին, որն ասարտում է 1962ին, իսկ 1963ին աշխատանքի է անցնում ՀՍՍՀ ԳԱ ՀԱԻ ժողովրդական բանահիւսութեան բաժնում, որտեղ աշխատում է մինչեւ իր կեանքի վերջ: 1972 Հոկտեմբերի 1ից կազմաւորում է բանահիւսական սկզբնաղբիւրների վաւերագրման բաժինը, որտեղ աշխատելու համար տեղափոխում են Ռ. Գրիգորեանը, Վ. Սվազլեանը, Վ. Սահակեանը եւ նրանց հետ միասին Վարդանեանը: Այստեղ նա զբաղուել է «Թիֆլիսի հայ բանագիտական դպրոցը» նիւթով:

ՀԱԻում աշխատելու տարիներին Վարդանեանը 1971-72՝ մասնակցել է բանահիւսական արխիւի վերլուծական վաւերագրման խմբային աշխատանքին, որտեղ ներգրաւուած են եղել երկու բանագիտական բաժինների գրեթէ բոլոր գիտաշխատողներն ու լաբորանտները: Այնուհետեւ՝ 1973-76՝ աշխատել է հայ ժողովրդական երգ-խաղիկների մոտիւային համաքաւառ եւ գիտական համահաւաք կազմելու խմբային նիւթի վրայ:

1982ին պաշտպանել է թեկնածոական՝ «Տիգրան Նաւասարդեանի կեանքն ու գործը» նիւթով:

Վարդանեանը տարբեր տարիների մասնակցել է բանահաւաքական արշաւախմբերի կամ իր նախաձեռնութեամբ գործուղման մեկնել Հայաստանի զանազան

շրջաններ եւ հիմնականում Արցախ՝ բանահիւսական նիւթեր գրառելու: 1994-2004՝ դասախօսել է տարբեր մասնաւոր համալսարաններում:

Նա հեղինակ է երկու մենագրութիւնների՝ *Տիգրան Նաւասարդեանի աւանդը հայ բանագիտութեանը* (Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն շարքի 18րդ պրակ, 1991, ռուսերէն) եւ *Միքայէլ Միանսարեանցի կեանքը եւ գործը* (2002): Այս գործերից զատ, նա Ալվարո Ղազիեանի հեղինակակցութեամբ պատրաստել է *Բազուի հայոց բանահիւսութիւնը* ժողովածուն (2004): 2009ին, նա էսթեր Խենչեանի հետ միասին հրատարակութեան է պատրաստել Յովհաննէս Յովսէփեանի «Ղարաղաղահայերի բանահիւսութիւնը» ժողովածուն, որը լոյս է տեսել որպէս նոյն հեղինակի *Ղարաղաղի հայերը* երկհատորեակի երկրորդ հատոր (2009): Ս. Յարութիւնեանի, Ռ. Գրիգորեանի եւ Վ. Սվազլեանի հետ միասին հեղինակակցել է «Հայ ժողովրդական խաղիկներ. համահաւաք ժողովածո» անտիպ աշխատութեան առաջին հատորը: Հեղինակել է նաեւ Արցախի բանահիւսութեանն ու հայ բանագիտութեան պատմութեանը նուիրուած բազմաթիւ գիտական յօդուածներ, որոնք տարբեր տարիների հրատարակուել են *Լրաբերի*, *Պատմաբանասիրական հանդէսի*, *Բանբեր Երեւանի Համալսարանի* եւ այլ պարբերականներում:

Սվետլանա Վարդանեանը չէր սիրում խօսել իր գործերի մասին, գլուխը կախ զբաղուած էր հետազօտական աշխատանքով՝ առանց անելորդ տարփողումների: Գործընկերները նրան կը յիշեն որպէս համեստ, պարտաճանաչ եւ կեանքի բոլոր դժուարին ու տարատեսակ իրադրութիւններում միշտ բարեհամբոյր անձնատուրութեան, ով վայելում էր շրջապատի յարգանքն ու սէրը:

Սվետլանա Վարդանեանը մահացաւ երկարատեւ հիւանդութիւնից յետոյ, 1 Հոկտեմբեր 2020ին:

ՀՀՀ



ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ
(1970–2020)

Վաստակաշատ հայագէտ, ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտի հայոց պատմութեան ամբիոնի վարիչ, Արտակ Երջանիկի Մովսիսեանի վաղաժամ վախճանը ցնցեց ԵՊՀ պրոֆեսորադասախօսական կազմին եւ ուսանողներին, ինչպէս նաեւ ՀՀ եւ Սփիւռքի ամբողջ պատմագիտական համայնքին, քանի որ նա աչքի է ընկել ոչ միայն ակադեմիական գործունէութեամբ, այլեւ հայրենաճանաչողական առաքելութեամբ՝ հաղորդաշարերով եւ գիտահանրամատչելի ֆիլմերով, հայ պատմագիտական համայնքում ամենաշատն է հանրայնացրել հայագիտութեան նուաճումները:

Արտակ Մովսիսեանը ծնուել է 1970ին ՀԽՍՀ Աբովեան քաղաքում: 1988-90՝ ծառայել ԽՍՀՄ զինուած ուժերում: Այնուհետեւ ընդունուել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտ, որն աւարտել է 1994ին: 1997ին պաշտպանել է թեկնածուական՝ «Վաւի Թագաւորութեան (Բիայնիլի, Ուրարտու) մեհենագրութիւնը» նիւթով, իսկ 2015ին՝ դոկտորական՝ «Հայաստանի գրաւոր մշակոյթը նախամաշտոցեան ժամանակաշրջանում» նիւթով: 2008ին նրան շնորհուել է դոցենտի, 2016ին՝ պրոֆեսորի

կոչում: 1991-97՝ եղել է Հայաստանի Պատմության Պետական Թանգարանի գիտաշխատող, 1998ից դասաւանդել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնում, 2016ին ստանձնել ամբիոնի վարիչի պարտականությունները: 1997-2020՝ իբրեւ գիտաշխատող համատեղութեամբ աշխատել է նաեւ ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտում:

Մովսիսեանի գիտական հետաքրքրութիւնների շրջանակն ընդգրկում էր հայոց պատմութեան հնագոյն եւ հին ժամանակաշրջանը, հնագոյն հայկական պետութիւնները, մեհենագրութիւնը: Նա հեղինակ է բազմաթիւ լեզուներով անլի քան հինգ տասնեակ յօդուածների, երեք տասնեակ մենագրութիւնների, տասից անլի դպրոցական եւ բուհական դասագրքերի, ուսումնամեթոդական աշխատանքների: Առաջին՝ *Հնագոյն պետութիւնը Հայաստանում. Արարկոտ (Ք.ա. 28-27րդ դարեր)* (1992) մենագրութեան համար 1994ին նա ճանաչուել է Հայաստան Համահայկական Հիմնադրամի «Երիտասարդ Գիտնականներ» մրցոյթի յաղողը: Այս մենագրութեամբ նա պետութեան ծագումը Հայկական Լեռնաշխարհում տեղադրել է Ք.ա. ԻԸ.-ԻԷ. դարերում, եւ յաջորդ աշխատութիւններում լրջագոյն փաստարկներով շարունակել հիմնաւորել իր տեսակէտը: Իր շնորհիւ Արատտայի եւ հնագոյն պետական այլ կազմաւորումների մասին յիշատակումները մուտք գործեցին ՀՀ եւ Սփիւռքի հանրակրթական-բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների դասագրքեր:

Պատմաբանի մենագրութիւնների շարքում են հետեւեալ աշխատութիւնները.- *Բարեպաշտ արքաների աշխարհակալութիւնը. հարկումեայ կայսրութիւն Տիգրան Մեծից առաջ* (1997), *Վանի Թագաւորութեան (Բիւյնիլի, Ուրարտու, Արարկոտ) մեհենագրութիւնը* (1998), *Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջատար Ասիայի հնագոյն հոգեւոր ընկալումներում* (2000, անգլերէն՝ 2004, ֆրանսերէն՝ 2006, ռուսերէն՝ 2010, իսպաներէն՝ 2010, գերմաներէն՝ 2013), *Հայկական մեհենագրութիւնը* (2003), *Նախամաշտոցեան Հայաստանի գրային համակարգերը* (2003, անգլերէն՝ 2006, ֆրանսերէն՝ 2007), *Հայաստանը Ք.ա. երրորդ հազարամեակում (ըստ գրատար աղբիւրների)* (2005), *Հայոց պատմութեան աշխարհակալութիւնները (համառօտ պետութիւն)* (2008), *Տիգրան Մեծ. թագաւորներից մեծագոյնը* (2010): Պատմաբան Պետրոս Յովհաննիսեանի հետ կազմել է *Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատի* աղբիւրագիտական ժողովածուի Ա. եւ Բ. հատորները (2007, 2011):

Հայոց պատմութեան գիտահանրամատչելի մատուցման գործում կարեւորագոյն նշանակութիւն ունեն նրա կազմած մի շարք աշխատութիւններ.- *10 հայ ականատար արքաներ* (2009), *Արեւմտեան Հայաստանի 10 ուխտաւայրերը* (2011), *10 հայ ականատար թագուհիներ* (2014), *Համառօտ պատմութիւն հայոց* (2014), *Հայոց 5000ամեայ պետականութիւնը (գիտահանրամատչելի պատկերագիրը)* (2016), *Պատկերագրող պեղեկագրու հայոց պատմութեան* (2016), *Արարկոտ-Ուրարտու Թագաւորութիւնը. գիտահանրամատչելի այբում* (հայերէն, անգլերէն, ռուսերէն՝ 2018), *Հին Հայաստան. 100 փաստ* (2019) են.: Կարեւոր նշանակութիւն ունի Սփիւռքի միօրեայ դպրոցների համար հայոց պատմութեան՝ նրա գրած ուսումնական ձեռնարկը, որը տպագրուել է մի շարք լեզուներով:

Արտակ Մովսիսեանի անտիպ գործերը շարունակում են հրատարակուել նրա մահից յետոյ եւս: Լոյս է տեսել *Հայաստանն ըստ անտիկ հեղինակների պատմա-աշխարհագրական պեղեկութիւնների* (արդի ուսումնասիրութիւններ եւ պատմական սկզբնաղբիւրների քրեստոմատի) (2020, համահեղինակներ՝ Միքայէլ Մալխասեան, Լիաննա Կարապետեան), ինչպէս նաեւ *Սահմանադրական մշակոյթի արժէքանական ակունքները հայ ժողովրդի հազարամեայ քրեագրութեան ծալքերում*

(2020) ստուարածառ աշխատությունը, որի առաջին բաժնի հեղինակը նա է: ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի եւ ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ՝ շուտով լոյս կը տեսնի նրա դոկտորական ատենախօսության լրամշակուած տարբերակը: Քուանտ վարժարանի նախաձեռնութեամբ հրատարակութեան է պատրաստում նրա, ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանի եւ Միքայէլ Մալխասեանի կողմից շարադրուած հայերէն-անգլերէն երկլեզու դասագիրքը՝ Միջազգային Բակալաւրիատ համակարգում հայոց պատմութեան դասաւանդման համար:

Նա նաեւ գիտահանրամատչելի բազմաթիւ ֆիլմերի հեղինակ է.- *Տիգրան Մեծ. հայրենապաշտ քրիակալը* (2007), *Նեմրուժ. արեւ-արեւայի մեծ սրբավայրը* (2008), *Ժայռապարկերներից մինչեւ այբուբէն* (2009), *Արտաւազդ Բ. պարփը՝ կեանքից վեր* (2014), *Հոռմից աւելի հին մայրաքաղաքը* (2014), *Պարմութեան կեղծարարները*. Աղբբջան (2014), *Արարալ-Ուրարտու Թագաւորութիւնը* (2016), *Հազարամեակների ճամփորդը*. Երեւան (2018), *Դրամապարտմ. հայոց դրամաշրջանառութեան պարմութիւնը* (2019) եւն.: Շուտով աարտին կը հասցուի եւ կը թողարկուի նրա *Հայոց թագուհիները* անաարտ ֆիլմը:

Արտակ Մովսիսեանը հայագիտական մի շարք պարբերականների (*Պարմաբանասիրական հանդէս*, *Պարմութիւն եւ մշակոյթ* եւն.), ԵՊՀ պատմութեան ֆակուլտետի գիտական խորհրդի եւ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ մասնագիտական խորհրդի անդամ էր:

Աշխատակցել է *Հայկազեան հայագիտական հանդէսի* ԺԳ. (1993) եւ ԺԷ. (1997) հատորներին:

Նա աջքի է ընկել հասարակական ջղուտ կեցուածքով, ազգային արժէքների պահպանման եւ սերունդներին փոխանցելու անկոտրում նուիրումով: Նման հայրենանուէր կեցուածքի եւ գիտամանկավարժական աշխատանքի համար 2015ին նա պարգեատրուել է ԵՊՀ ոսկէ մեդալով, իսկ 2016ին ՀՀ պաշտպանութեան նախարարութեան Վազգէն Սարգսեան մեդալով:

Արտակ Մովսիսեանը կեանքից անժամանակ հեռացաւ 3 Հոկտեմբեր 2020ին, Երեւանում:

ՄԻՔԱՅԷԼ ՄԱԼԽԱՍԵԱՆ (mmalkhasyan@ysu.am)

ԵՈՀԱՆ ԲՈՒՐԻԱՐԴ
(1931–2020)

Գերմանացի բողոքական աստուածաբան, Նոր Կտակարանի եւ հին յուդայականութեան մասնագէտ Եոհան Բուրխարդը ծնուել է Կէթթինկէնում: Տեղի Գէորգ Աւգուտի Համալսարանում սովորելուց յետոյ 1963ին այնտեղ պաշտպանել է դոկտորական «Յովսէփ եւ Ասանէթ» վէպի նիւթով: Այնուհետեւ աշխատել է նոյն համալսարանում: 1971ին անցել է Հայդելբերգի Ռուպրիխտ-Կարլս Համալսարանի Նոր Կտակարանի եւ յուդայականութեան ամբիոն որտեղ դասաւանդել է մինչեւ իր հանգստեան կոչուելը 1997ին: Գրել է երկու հատորանոց ցանկագիրք Մեռեալ ծովի ձեռագրերի վերաբերեալ:

Մայքըլ Սթոնի եւ Եոս Վայթենպերկի հետ մեծ դեր է խաղացել Association Internationale des Études Arméniennesի հիմնադրութեան մէջ, 1981ին, եղել է ընկերակցութեան վարչութեան երկարամեայ գանձապահը: Ան մեծ ճիգ տարաւ կազմակերպելու հայագիտական առաջին միջազգային գիտաժողովներէն մին՝

1990ին, որուն նիւթերը հրատարակուեցան 1993ին՝ *Armenia and the Bible. Papers Presented to the International Symposium Held at Heidelberg, July 16-19, 1990* (University of Pennsylvania, Armenian Texts and Studies, Atlanta) վերնագրով:

Նորկտակարանագէտ ըլլալու կողքին ան յատուկ հետաքրքրութիւն ունէր հայ մատենագրութեան հանդէպ, որուն դրսեւորումներէն էր իր դոկտորական թեզը, որ լոյս տեսաւ 2010ին՝ *A Minor Edition of the Armenian Version of Joseph and Aseneth* վերնագրով: Իր հայագիտական հետաքրքրութիւններուն մաս կը կազմէին նաեւ հայկական պարականոնները:

Եռիստֆ Բուրխարդը մահացաւ Գերմանիա, 21 Դեկտեմբեր 2020ին:

ՀՀՀ

ՎԱՀՐԱՄ ԼԱԼԱՅԵԱՆ

(1974–2020)

2020ի արցախեան երրորդ պատերազմում նահատակուեց արցախցի աստուածաբան, նարեկագէտ, պատմական գիտութիւնների թեկնածու Վահրամ Լալայեանը:

Վահրամ Լալայեանին ճանաչողները նրա մասին խօսում են իբրեւ ազնիւ, համեստ, զուսպ մի մտաւորականի, որ պատերազմի առաջին օրից կամաւորագրուեց հայրենի Հաղորդի պաշտպանութեանը: Նա պատերազմի ժամանակ Մեծ Թաղերում մնացած վերջին բնակիչներից էր, որ փորձում էր անհաւասար պայքարում պահել հայրենի գիւղը, որտեղ նա ծանօթէն վիրաւորուեց Հոկտեմբերին:

Վահրամի եղբայրներից մէկը զոհուել է արցախեան առաջին պատերազմում, իսկ ինքն այդ ժամանակ գլխից ծանր վիրաւորուելուց, միքանի անգամ վիրահատուելուց յետոյ անբաժան կապուել է Նարեկացու *Մատենի* հետ:

Այդ ժամանակ Արցախի Պետական Համալսարանի հաշուապահական հաշուառման բաժնի ուսանող էր. թողնում է ուսումը եւ ընդունում է ԵՊՀ աստուածաբանութեան ֆակուլտետ, որտեղ ուսանելուց եւ մագիստրականն աւարտելուց յետոյ պաշտպանում է թեկնածուական՝ «*Մատենի ողբերգութեան պոէմի խորհրդաբանական ընկալումները*» նիւթով:



Վահրամ Լալայեանը ղեկավարում էր Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» Համալսարանի պատմության ամբիոնը, որն այս տարի կոչուել է նրա անունով: 2021ին լոյս տեսաւ նրա *Գրիգոր Նարեկացու 'Մալեան ողբերգութեան' երկի խորհրդաքանական ընկալումները ԺԳ.-ԺԸ. դարերում* աշխատութիւնը: Նրան յիշում են իբրեւ «Գրիգոր Նարեկացի» Համալսարանի նուիրեալ դասախօս, որ իր կեանքի իմաստը տեսնում էր հայ միջնադարեան գրականութեան ոգին, յատկապէս Նարեկացու փիլիսոփայութիւնն ուսանողներին փոխանցելու մէջ:

Վահրամ Լալայեանը յուղարկաւորուեց Եռաբլուրում Դեկտեմբերի 25ին:

ՀՀՀ